

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ



ՔԻԻ 22



29 ՄԱՅԻՍ 1904

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեկեմար (Առաջին յօդուած) ՄԵՐՍԷՏԷՍ. — Մայիսի հոգին (Բանաստեղծութիւն) Մ. ՈՒ. ԴՈՒՐԼԵԱՆ. — Օրուման կեանքէն. «Անճեհացող դէմք մը». ՄԵՆԱՍԷՐ. — Դիտական Քրոնիկ. ՆՈՒՊԱՐ. — Հայ նկարիչները. Հ. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ. — Սերը միջալայիին համեմատ (Նորավերջ) Իզմիրեան կեանքէն) ՊԱՐԷՏ. — Սիրոյ երգեր. Շ. — Զանազանք:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերքի տարեկան բաժանորդագրին է Կ. Պոլսոյ համար Բառսուն դր. եւ զաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի: Արտասահման 12 Ֆրանք կամ 5 րուպի: Թղթաստացական ծախքը, նախագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրու քիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկէն: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելի ամէն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է իսկոյն իմացնեն նախագրութեան: Ժամանակ անցնելի վերջ՝ այս տեսակ առարկութիւնները նկատողութեան չեն առնուիր:

Զի հրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշնչի պայմաններով:

Զեմ-Բէ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ
Հասցէ

درعليه ده غلطه ده (ماسيس) غزتيه سى اداره سى

ԽՐԹԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Հալաքիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. կառավարութեան ֆոնդայիքի ներքեւ, երաշխաւորեալ զրամագլուխ ունի՝ հրդեհի ճիւղին համար 56,000,000 ֆր:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատուած է՝ միշտ գործած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբը եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց ու վստահելիութեան վրայ գաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հանրածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուներէն զատ, Բարիզի՝ Օրէրա, Վազիլ, Նուվօթէ, Ամպիլիւ, Ֆօլի-Տրամաթիք եւ այլն թաղերէն, նաեւ Պոստոյի, Թուլուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ տեղերու մեծ թաղերէն:

Պօն Մարշէն, Լուվրի վաճառատուները, Բիկ Խալիոնը, Բրէնթանի, Պէլ-Ժառաիսիէռի, Օթէլ տը Լիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառատուները:

Թրանսաթլանթիք, Հաւր-Մարսիլիա նաւարկութեան, Ծովային Փոխադրութեանց, Ֆրանսական Թրամուէյներու, խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Ընկերութեան զրամատուներն է Բրէտի Լիօնէն:

Այն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է՝ մեր հրապարակին վրայ իր պատուաւորութեամբը ծանօթ:

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել հրդեհի վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց համար. Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie d'Assurances Maritimes ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը:

Հասցե — Պօլիս. Մահմուտ փաշա, Պէտիւք Եւլաղ Խան, Թիւ 14, Լա Գօնֆիանս ապահովագր. ընկ. Գրասենեակը:

Գառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնակազմի սեփականութիւնը եղաղ անքիֆաի վաճառատուն մը, Դուկայ Սահաֆլար, Թիւ 46, ուր գաւառներէն առուծախի յանձնարարութիւններ կ'ընդունուին:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՍՑ ԱՊԱՀՈՎՊԳՐԱԿԱՆ ԸՆԴ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՋ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ԶԻՒՂ

Մինչեւ 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Քր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

ԿԵՆՍՑ ԶԻՒՂ

Մինչեւ 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Քր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Էւնիոն»ի ապահովագրեցող կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՉԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒՄ ԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղչեալ գիներով: Նպատաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Էւնիոնի ապահովագրողը ՉԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբուրիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՒՐԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրքեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԳԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասամ Գաբրէր Օղլու

Մասնաձեռն՝ Ղալաթիա, Խոսէյթ Խան: Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ



ՅՈՎԱԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Մուգաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Դեպքանատան

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, քիւ 61

Զբոսանքան աքառքման

Պալապեան ամէն օր աւուայի ամէն տեղակ հիւանդութիւններով տառապողներ, կ'ընդունի. իսկ Ուրբաթ, կիրակի եւ երեքշաբթի մինչեւ ժամը 5: Գիշերուան օր եւ է ժամուն կարելի է դիմել: Պալապեան կ'երաշխաւորէ իր լեցուցած ու շինած աւուանները: Ճորեկները աւուայ քաշել տալու համար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին կամքէն կարելի է:

Ապփասնեբուն ճիթ

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՋԻՆ ԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տեղակ գոհարեղէններ ունենալ, աժա՛ն ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ դաւաղաններ եւայլն, դիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-փողոց, թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 չարաթական վճարում: Կանխիկ գնողին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 զեղչով եւ կ'առնուին. իսկ ապառիկ գեղեղներէն՝ 100ին 15 զեղչով:

ՏԱՆ ԵՐԱՆՈՒԹԻՈՒՆԸ

զուսկներուն աչաց պայծառութիւնով կը կայանայ, երբ անոնց աւեր կը դառնան, մոածմունքի և նեղութեան պատճառ կը լլայ: Եթէ այսպէս տկարացած տղու մը



SCOTT'S EMULSION

տրուի՝ առողջութիւնը շուտ մը կը վերադառնայ և մոածմունքը կը դադրէ: Վասնզի Ըսգոթի Բաղադրութիւնը հիւանդութեանց դէմ կը դնէ, և զտղայքը զօրաւոր մեծնալու կ'օգտէ և անոնց աչքերը փայլուն և զուարթ կը պահէ. միշտ

ԸՍԳՕԹԻ ԲԱԳԼԵՐՈՒԹԻՈՒՆ

պահելու է. Ասիկայ զՁեզ և Ձեր զաւակները դիշեր ու ցորեկ ցաւերէ և յուսահատութիւններէ կը փրկէ: Ուշագիւր պէտք է ըլլալ որ շինք վրան այս նշանով վարդագոյն փաթեթի մը մէջ է—եթէ կ'առնէք

ԸՍԳՕԹԻ ԲԱԳԼԵՐՈՒԹԻՈՒՆ

փոշիութիւն առած կ'ըլլաք:

Հիշերու վրայ ասոր սուշ գրութիւնը ընել պէտք է:

22

Բոլոր բեղաւորները և բեղաւորները կը ծախեն:

ԳՈՐԾԱՐԱՆ

Գորգի մաքրութեան եւ նորոգութեան

(Գրասենեակ՝ Մանուկ—փաշա, Թարագճր-լար, Մեծ Նար Սանի կից, Թ. 37)

Այս հանրածանօթ գործարանին մէջ կը մաքրուին աղտոտած եւ փոշոտ թէ՛ մետաքսէ եւ թէ՛ բարդէ ամէն տեսակ ընտիր գորգեր, քիմիական դեղորէից միջոցաւ, առանց որ եւ է արքա կամ հետք ձգելու: Բնդհանրապէս, բոլորովին նոր երեւոյթ մը կ'առնեն այս գործարանին մէջ մաքրուած գորգերը:

Ունի նաեւ առաւելութիւն մը նոր գորգերու վրայ, այն է թէ՛ այս գործարանի մէջ մաքրուած գորգերը դերծ կը մնան ցեցերու (կիւվէ) կեր ըլլալէ:

Կը նորոգուին նաեւ օրեւէ կերպով վնասուած գորգեր:

Սոյն գործարանը կը ստանան նաեւ պարսպան նոր գորգեր, ինչ մեծութեամբ ու ճաշակով որ ուզուի:

Ծանօթարարութիւնք պէտք է ուղուին գրասենեակը:

Դիւրամատչելի պայմաններ:

ՏՈՔԹ. ՔԻՐԻԱԲՈՒ

Dr. Kiriakou Bander mali

Ջիդերու, լեարդի եւ սամոսի հիւանդութեանց մասնագէտ

Բարիզի հիւանդանոցներուն մէջ գործնական փորձեր կատարելով վերագրեալ հիւանդութեանց համար մասնագիտութիւն ձեռք բերած է: Իրեն դիմողները կը դարձան ամէն օր ժամ 7էն 10 Բերա Ս. Ղա Համամ հիւանդանոցի հիւանդանոցներին դէմ, թիւ 5 տունը, իսկ առաւելները միջեւ կէսօր Պօլիս կամար ջին գլուխը Բոսթամի Արսէնաքի թիւ 71 դեղարանը: Բիչ առնի մէջ կը դարձան ջլալին տկարութիւններ, լուսնոտութիւն, տեղամալուծութիւն, գլխու ցաւ, օրտի բաբախում, անքունութիւն, ափսոսանք, օրտալ, յօդացաւ, ստամոքսի հիւանդութիւններ, դժուարաթորութիւն, ալգանդի հիւանդութիւն եւ այլն: Դարմանման համար ներարկումով ելեկտրականութիւն կը գործածէ: Ելեկտրական դարմանի համար մասնաւոր սրահ մը կայ:

ՄԱՍԻՆ

54^ր ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻՒ 22

29 ՄԱՅԻՍ 1904

ՀԱՅ ՄԵԿԵՆԱՍԸ

(Ա.Ռ.Ս.ՋԻՆՆ ԹՕԴՈՒԱԾ)

Մեկենասին խաղացած դերը մեր գրականութեան մէջ, տակաւին շատ գէշ կերպով մը ներկայացուած կրնանք նկատել, նոյն իսկ այն երկու յօդուածներէն վերջ գորս Արտաշէս Յարութիւնեան գրեց այդ մասին, ինչպէս նաեւ այն պատասխաններէն վերջ՝ որոնք Բիւզանդիոնի մէջ հետեւեցան իր յօդուածներուն:

Արտաշէս Յարութիւնեան՝ իր առաջին յօդուածով կ'ըսէր թէ «Մեկենասը փառասէր մարդ մըն է որ ողորմութիւն կուտայ գրագէտի մը, անոր գործին հրատարակութեան ծախքը հոգալու պատրուակով»: Կ'ըսէր տակաւին թէ «Մեկենասը վնասակար բոյս մըն է որ բարեբախտապէս անհետացած ըլլալ կը թուի մեր կլիմային տակէն»: Թէ՛ «Մեկենասին դերը ոչինչ ունի իրեն մէջ աղնուացող, բարձրացող, սրտապնդող. ընդհակառակը»: Մեկենասին դերը այս կերպով որոշելէ վերջ, չէր վարաներ աւելցնելու թէ «Մեկենասին վերերեւումը չպիտի կրնար ո՛ր և է կերպով զարգացնել մեր արդի գրականութիւնը»:

Իր երկրորդ յօդուածը քիչ մը նուազ արմատական է: Այս անգամ՝ Մեկենասին գոթեան իրաւունքը կը ձանձնայ իր ազնուական բարձր իմաստին մէջ, ու նոյն իսկ կը փնտռէ զայն մեր շուրջը: Այսինքն՝ «Ճշմարիտ ու գիտակից Մեկենասը, գաղափարի մը իրագործման նիւթական միջնորդը՝ լեցուն իր գերին բանաւոր հաճոյքովը: Այն Մեկենասը՝ որ անհատին հետ ուղղակի գործ չունի և հետեւաբար հեռու է անմիջական երախտագիտութիւններու հետապնդումէն»:

Յարութիւնեանի գրչին տակ սակայն, ասիկա աւելի ապագայի ակնկալութիւն մըն է. չի հաւտար որ այդ ըմբռնումը ունեցող մեկենասներ գոյութիւն ունեցած ըլլան: «Պիտի համարձակիմ պնդելու թէ՛ կ'ըսէ՛ բազմաթիւ հեղինակներու գործերուն հրատարակման նպաստող մեկենասներ՝ ողորմութիւն տուողներ էին միայն, յաճախ կարդալ — գրել չգիտցող մարդիկ, չողոքորթուած ու փճացած իրենց չտես հարուստի տգէտ ունայնամտութիւններուն մէջ: Ամիրաներու կենսագրութեանց ուսումնասիրութիւն մը պիտի գար աւելի ուժովցնել այս հաստատաբանութիւններուն իրական նշանակութիւնը»:

Միեւնոյն կարծիքէն ըլլալ կ'երեւայ նաեւ Բիւզանդիոնի խմբագրապետը՝ անցեալին այդ մեկենասներուն մտաւորական վիճակին ու ձգտումներուն նկատմամբ: «Արտաշէս էֆ. Յարութիւնեանի յիշած մեկենասները, — կը գրէ, — իրենց կրկնութիւնը առած պիտի ըլլային ժ.թ. Դարուն առաջին կիսուն: Արդ, այս մարդիկը մեղաւոր էին, պախարակելի՞ էին, եթէ ժ.թ. Դարուն առաջին կիսուն մէջ ուսման ու գիտութեան վրայ զարգացեալ ճաշակ մը չէր տրուած իրենց, եթէ գրականութիւնն ի սէր գրականութեան և գիտութիւնն ի սէր գիտութեան սիրել չէին սորվեցուցած իրենց»: Տարբերութիւնը սա է միայն որ Բիւզանդիոնի խմբագրապետը անպատեհութիւն մը չի տեսներ այդ կարգի մարդոց մեկնասներ հանդիսացած ըլլալուն, կամ հանդիսանալուն մէջ, և ընդհակա-

ուակը, գնահատալի կը գտնէ զանոնք որ «ատանկ ազնիւ, պատուաւոր գործէ մը ախորժեր են, գուցէ կարդալ գրել չգիտնալով հանդերձ»:

Անցեալին մէջ՝ հայ մեկենասներու խաղացած դերին այս ըմբռնումը հիմնովին սխալ է: Մեկեմաս բառը զոր արուեստի և դրպրութեանց պաշտպաններուն ու քաջալերիչներուն կուտանք, անունն իսկ է ասպետ Չիլնիուս Մէլէնասի՝ Օգոստոսի մտերիմ Հռովմայեցի քաղաքագէտ մը որ մեռած է Քրիստոսի թուականէն ութ տարի առաջ, և որ մասնաւոր հաճոյք մը կը զգար գեղարուեստները պաշտպանելով: Մէլէնաս նոյն ատեն բանաստեղծ մըն ալ եղած է, ինչ որ կ'ենթադրէ թէ, գեղարուեստներու այդ առաջին նշանակելի քաջալերիչը լիովին կ'ըմբռնէր իր կատարած գործը, իր ըրած բարիքը: Եւ սակայն, եթէ մասնաւորաբար ժամանակակից Հռովմայեցի բանաստեղծներուն ինչպէս Վերգիլիոսի և Հորացիոյի դրուատիքներուն շնորհիւ Մէլէնասի անունը ընդհանրացած և քիչ առ քիչ գեղարուեստի բոլոր քաջալերիչներուն յատուկ ածականի մը հանգամանքը ստացած է, երբեք խնդիր չէ եղած այդ ածականը ստացող անձին մօքի հարստութիւնն ու զարգացման աստիճանը: Արդէն, Վերգիլիոս ու Հորացիո՝ Մէլէնաս ասպետը աւելի իբր նուիրատու մը, իբր քաջալերիչ մը և հետեւաբար իբր բարերար մը դրուատած են քան թէ իր բանաստեղծ: Վերջէն ալ, յետին տգէտը որ այդ քաջալերութիւնը չէ զլացած դպրութեանց և արուեստներու բարդաւաճման համար, «Մեկենաս» յորջորջուած է ա'յնպէս, ինչպէս յորջորջուած են էապէս զարգացած ու միեւնոյն բարիքը ընող մարդիկ:

Ուրեմն՝ մեկենասի մը անդարդ ըլլալը չենք կրնար պատճառ բռնել՝ զայն դատապարտելու համար: Զարգացեալ կամ անզարդ՝ մենք աւելի իր ընթացքէն ծագող բարիքն ու օգուտը պէտք է նկատի առնենք: Նօպէլ մը այսօր, իր հաստատած մրցանակին համար ա'յնքան արժանի է երախտագիտութեան որչափ յետին անյայտ ուսմիկը որ նոյն նպա-

տակին ձգտող բարիք մը կ'ընէ: Նոյն իսկ չպիտի վարանիմ ըսելու թէ տեսակէտով մը, վերջինը աւելի արժանի է դրուատիքի քան առաջինը: Նօպէլ մը՝ մի՛ միայն զարգացած ըլլալուն համար՝ այս բարիքը իբր պարտք մը պէտք է նկատէ իրեն. մինչդեռ տգէտ ու ուսմիկ մարդը՝ որ բնականաբար տարբեր կը մտածէ, չի կրնար իբր պարտք մը նկատել այդ կարգի գործեր, և չա'տ աւելի մեծ զօնողութիւն մը ըրած կ'ըլլայ իր ըմբռնած պարտաւորութիւններէն դուրս գտնող նպատակներու դրամ տալով:

Անգամ մը այս կէտը ճշդելէ վերջ, տեսնենք թէ հայ մեկենասը՝ խնդրոյ առարկայ այդ շրջանին, — ԺԹ. դարուն առաջին կիսուն, — իսկապէս անուս, իր ըրածին գիտակցութենէն զուրկ, իր չտես հարուստի տգէտ ունայնամտութիւններուն մէջ փքացած մարդ մըն էր, ինչպէս կը հաւատտէ Արտաշէս Յարութիւնեան: Բայց ատկէ առաջ պէտք է աչքերնիս նետենք աւելի հին ատեններու, մեկենասներու բողբոջման առաջին տարիներուն վրայ, հասկնալու համար թէ գրի ու մօքի մեր առաջին սատարողները ինչ կերպով կը կատարէին իրենց բարիքը:

Ամիրայական շրջանները ուսումնասիրող ծանօթ բանասէր մը, Մրմրեան էֆէնտի, տակալին ԺԹ. դարէն առաջ հայ իմացականութեան զարգացման նպատող բազմաթիւ մեկենասներու գոյութիւնը կը զգացնէ պզտիկ հատորի մը մէջ՝ զոր հրատարակեց մէկ քանի տարի առաջ(*): Սյդ մեկենասներուն անունը անյայտ մնացած է այնչափ, որչափ մնացած են արդէն նոյն ատեններու բոլոր նշանաւոր բարերարներու անունն ու գործերը: «Միմիայն Երուսաղէմի Գրիգոր Շիթայակիւրի (1717--49) ու Պոլիսի Յովհաննէս Կոլոտի (1715--41) Պատրիարքութեան իրրեւ քսանըհինգ տարուան միջոցը, — կը գրէ Մրմրեան էֆէնտի, — կ'երեւի Արծաթ Դօր մը շինութեանց և ուսումնասիրութեանց, մինչ ափրաներ, մահոտսիներ, աղա-

(*) «Հին օրեր եւ այդ օրերու Հայ Մեծաւոցներ»:

ներ և ուսումնասիր վարդապետներ ու եպիսկոպոսներ՝ չուրջն առած այս երկու Ամլածիններուն՝ (երկու Պատրիարքներն ալ Բաղէշի Ամլորդէոյ վանքէն էին), կառուցին իմացական, բարեսիրական և աստուածասիրական շատ բաներ, ու տպագրեցին և թարգմանել տուին կրօնական ու բանասիրական շատ գիրքեր»։

Ո՞վ են սակայն այս մարդիկը՝ որոնց մասին գրեթէ ոչինչ աւանդուած է մնդի։ Ինչ են ըրեր իրենց «չտես հարուստի տգէտ ու նախամտութիւնները» մշտնջենտութեամբ համար։ Եթէ չեն մտածեր իրենց անունն ու վործը յաւերժացնելու, եթէ իրենց փառասիրութիւնը գգուող և իրենց յիշատակը տեւական դարձնող միջոցի մը վրայ չեն խորհեր, ուրեմն ամէնքն ալ շատ հեռու են այն «ողորմութիւն տուող» և «իրենց ըրածին նշանակութիւնը չգիտցող գեղջուկներէն» զորս Արտաշէս Յարութիւնեան չեմ գիտեր ո՛րկէ գտած էր այնքան խստորէն, այնքան սպանիչ եղանակով մը բլքտելու համար։ Ունայնամիտ, մտքով ու հոգիով աղքատ, սրտով ստոր մեկնեաւոր տիպար մը գտնել այդ չըջանին մէջ, մեզի համար միշտ դժուար պիտի ըլլայ, որովհետեւ մասնաւորաբար այդ ատեններուն մէջ՝ մարդիկ իրենց ըրած բարիքով պարծնելու սովորութիւնը չունէին տակաւին։ Բարիքը կ'ընէին բարիքի համար միայն, ընդհանրապէս գաղտնի, առանց ցուցադրութեան, առանց գովեստի և երախտիքի ակնկալութեան։

Բարերարի, մեկնեաւոր տիպարներուն խաթարումը շատ ետքի գործ է։ մինչև մամուլին ծաղկման ատենները պէտք է ետ երթանք անոր ճշմարիտ պատճառները գտնելու համար։ Այդ խաթարման հեղինակը մամուլը եղած է, անանկ ատեն մը ուր ժողովուրդին աչքին՝ տպուած թերթին նշանակութիւնը շատ մեծ էր, ուր լրագրի մը մէջ իր անունը տեսնելը սկսած էր տարբեր փառասիրութիւն մը ներշնչել հաւասարապէս ամէն մարդու։ Տակաւին մինչև այսօր, գաւառներու մէջ կը գտնուին մարդիկ՝ որոնք պարզապէս իրենց թերթին դուռին վրայ անուննին տպուած

տեսնելու համար բաժանորդ կ'ըլլան։ Եթէ անոնց ձեռագիր գօտիով թերթ ղրկուի, իսկոյն ետ կը դարձնեն, կը դադրեցնեն իրենց բաժանորդագրութիւնը։ Մարդիկը՝ անուննին տպուած տեսնելու ուրիշ առիթ մը չեն կրնար ունենալ, այդ առիթը միակն է, և այն աստիճան ալ կը փքացնէ զիրենք, որ իրենց անունը կրող բոլոր լրագրի գօտիները խնամով կը պահեն, թանկագին առարկաներու *foi-hésion*ի մը հոգածութեամբ ու գուրգուրանքով։

Ու կրկին մամուլն է որ այդ մեծամտութիւնը արթնցուցած է ժողովուրդին մէջ։ Ծարպիկ լրագրապետներ, մարդոց տկար կողմերուն էապէս ծանօթ, չեն վարանած զանոնք գրգռելու, զանոնք շահագործելու։ Իրենք լրագրական գովասանքի առիթներ ստեղծած են, իրենք լրագրին շնորհիւ փառասիրութեան յազուրդ տալու միջոցներ հնարած եւ ընդհանրացուցած են, որովհետեւ ճշմարտապէս ունայնամիտ մարդիկ երբեք չեն վարանած իրենց այդ բարեկամեցողութիւնը առատօրէն, յաճախ իշխանաբար վարձատրելու։

Պարոնեանի բովանդակ երգիծանքը աղբիւրն է միայն կը պատշաճի, այսինքն՝ եօթանասնական տարիներու մասնաւորաբար առաջին մասին, չըջան մը՝ որուն պատկանող լրագրապետներէն մի միայն Մինաս Գաբամաճեան մը կրնար բաւել հարկւր Արիստոտել աղաներ փետրատելու համար։ Եւ արդէն՝ Պարոնեանի գործին մէջ ալ՝ անդիտակից բարերարի ու մեկնեաւոր այդ անգուղական տիպարը՝ Արիստոտել աղան՝ այնչափ չէ՝ ձաղկուած, որչափ ստորնացուած են միւսները, այսինքն ամբողջ վոհմակը այն «մեծապատիւ մուրացկաններ»ուն որոնք խեղճ մարդը կը չըջապատեն, որոնք ամէն տեսակ գձձութիւն յանձն կ'առնեն բոլոր մը դրամ աւելի փրցնելու համար։

Բայց ելլել՝ և մի միայն Մեծապատիւ Մուրացկանները հիմ բռնելով հետեւցնել թէ «Բաղմաթիւ հեղինակներու գործերուն հրատարակման նպաստող մեկնեաւորներ» ողորմութիւն տուողներ էին միայն, յաճախ կարգալ

— Գրել չգիտցող մարդիկ, չողոքորթուած ու փքացած իրենց չտես հարուստի տգէտ ունայնամտութիւններուն մէջ», ասիկա ո՛չ թէ միայն անիրաւ է, այլ սխալ: Պարոնեան՝ ամէն բանէ առաջ երգիծաբան մըն է, և իր գործն ալ լեցուն է չափազանցութիւններով: Իր ձաղկած թերութիւնները միշտ խոշորացոյցով դիտուած են. նոյն իսկ յաճախ՝ չէ վարանած բոլորովին անգոյ, իրականութեան հակառակող տիպարներ մէջսեղ դնելու և զանոնք ընդհանրացնելու: Ասոնք ներքի բաներ են իրեն համար: Ինչ որ է ծաղրանրկարիչը արուեստին մէջ, նոյնն է նաև երգիծաբանը գրականութեան մէջ: Երկուքն ալ՝ աւելի աղդեցիկ դառնալու, ու մասնաւորաբար ռամիկին և անզարգին իրենց մշտածու մը հաղորդելու, ըմբռնել տալու համար անհրաժեշտաբար ստիպուած են չափազանցութեան դիմելու: Որչա՛փ մեծ գիծեր գործածեն իրենց տիպարը ներկայացնելու համար, այնքան շուտ կը համին իրենց նպատակին: Հետեւաբար չենք կրնար զանոնք դատապարտել՝ դիտելու ատեն խոշորացոյցի մը, և ներկայացուցած ատենին ալ ակռանձիսմանի գործիքի մը դիմած: Ըլլալնուն համար:

Ասիկա սակայն պատճառ մը չէ որ անոնց գործերէն հետեւութիւն մը հանած ատեննիս, ներկայացուած տիպարը կամ թերութիւնը առնենք ա՛յնպէս, ինչպէս որ ցոյց կուտան մեզի, այսինքն երեւակայութիւնք բոլոր չափազանցութիւններով խոշորցուած: Ուրեմն սխալ է այն մեկնակէտը՝ ուրիշ Արտաշէս Յարութիւնեան ճամբայ կ'ելլէ խեղճ հայ մեկենասը խարաղանելու: Սխալ է մանաւանդ անո՛ր համար որ Պարոնեանի երգիծանքը ո՛չ թէ ԺԹ. դարու առաջին կիսուն, այսինքն մեկենասներու և բարերարներու բուն ծաղկման շրջանին կը պատշաճի, այլ շատ աւելի մեզի մօտ եղող շրջանի մը, եօթանասնական տարիներուն, որոնց միջոցին դարձեալ ունայնամիտ մեկենասներ չեն եղած այնչա՛փ առատ՝ որչափ կը կարծէ Արտաշէս Յարութիւնեան:

Այդ շրջանին մէջ ալ, ինչպէս անկէ ա-

ռաջ, աւելի՛ իրենց ըրածին նշանակութիւնը էապէս ըմբռնող մեկենասներն են՝ որ կ'ե. րեւան մեզի: Ասիկա ոչ ոք կրնայ ուրանալ. պզտիկ ակնարկ մը այդ ԺԹ. դարու առաջին կիսուն վրայ, որուն պատկանող մարդիկը՝ Բիւզանդիոնի խմբագրապետը չէր վարանած «ուսման և գիտութեան ճաշակէ զուրկ(?)» նկատել, պիտի բաւէ մեզ համոզելու համար:

Այդ ակնարկն է որ պիտի պարզենք յաջորդ յօդուածով:

ՄԷԻՍԷՏԷՍ

Ս Ե Ր Ո Յ Ե Ր Գ Ե Ր



Ովկէանին մէջ կիրքերուդ կանացի,
Դեգերեցայ՝ ինչպէս նաւակ մը երկչոտ:
Ու թաւիչէ փայփայանքէդ ըզգացի,
Ինչ որ հեշտանք կու տար արեւն ճաճանչոտ:

Ջեփիւռի մը գըրգանքին պէս թըրթըռուն
Դաղջ գըրգուանքէդ համբոյրներէդ խելայեղ,
Անտեսեցի գահալէծներն ալքերուն,
Ու մոռցայ ես բուռն հոսանքներն ամէն հեղ:

Եւ, հիմակ որ, ալ խըլեակն եմ փանաքի,
Խօլ քըմայքին անզուսպ կիրքիդ եռեւեփ,
Ու վիհերու մէջ գալարուող սահանքի՝
Հիմա՛կ, աւա՛ղ, կըզգամ կորուստն անվըրէպ:

Ու կը խորհիմ կոյս սիրտերուն դիւրախաբ,
Որ կախարդուած թոյն-հըմայքէդ անխարխափ
Եկան մօտը քըմչոտ սիրոյդ ճաճանչին,
Եւ որ, հիմակ, քեզմէ հեռուն կը խամրին:

Այսպէս բոլոր յիշատակներն անկեւդան,
Անքիծ յողերն ու երազներն ալ կ'իյնան
Կիրքերուդ լայն հոսանքին մէջ, ո՛վ Տիկին,
Ուր կը մարի փըրփրոտ մաղձը կոհակին:

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԷՆ

ԱՆՇԵՏՍՑՈՂ ԴԵՄՔ ՄԸ

Օրուան մահ մը՝ «Օրուան կեանք»-ի նիւթ կըստեղծէ միշտ, լրագրութեան համար սովորական դարձած հակադրութեամբ մը, և բնական էր որ Միքայէլ էֆ. Յակոբեանի նման ծանօթ անձնաւորութեան մը անհետացումը խօսեցնել ու գրել տար իր վրայ, ցաւի առաջին տպաւորութիւններէն և յուզարկաւորութեան նկարագրութիւններէն ետքն ալ, —որոնք ամէն հարուստի յատուկ են։ Մինչդեռ, Միքայէլ էֆ. իր այդ հանգամանքովը չէր միայն որ փառաւոր թաղում մը ունեցաւ, այլ մանաւանդ իր բարեգործութեանց և մասնաւորապէս Ազգ. Հիւանդանոցին մատուցած ծառայութեանց շնորհիւր. ազգին ամէն դասակարգերուն կողմէ իր դաշաղին ընծայուած պատիւները՝ հանրային գնահատման հաւաստիք մըն էին որուն արժանի էր կատարելապէս։

Իր հանրային գործունեութեան պէս, որ Հիւանդանոցին շուրջը կեդրոնացաւ երկար տարիներ, իր մահն ալ mouvementé բան մը ունեցաւ, դարձեալ Հիւանդանոցի տեսակէտով, և այդ Հաստատութեան ճակատը զետեղելի արձանագրութեան խնդիր մը բաւական նիւթ հայթայթեց խօսակցութեան, սկիզբները տարտամ, անորոշ ձեւերով, մինչև որ Բիւզանդիոն իր երեքշաբթիի խմբագրականին մէջ ամփոփ ձեւի մը տակ պարզեց իրողութիւնը կամ «միջադէպը»։ Լաւագոյն էր անշուշտ որ Յակոբեան էֆ. ն դառնացած սրտով չփակէր աչքերը. թերեւս կարելի պիտի ըլլար համաձայնութեան եղանակ մը գտնել՝ քանի որ խմբագրութեան մը ձեւին կամ քանի մը բառերու վրայ էր միայն խընդիրը. բայց մահը ժամանակ չթողուց ասոր։ Ու Հիւանդանոցի նախկին Հոգաբարձութեան բազմաշխատ ատենապետը, որ գլուխ կեցած էր վերայինութեան գործին, գնաց հանգիլ Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ

հովանիին տակ, որուն վերայինողը եղած էր իր եղբօրը հետ։

Բայց հանրային կեանքէ անրաժան եղող այն դառնութիւնները, զորս կրած էր Միքայէլ էֆ. Յակոբեանն ալ իր ատենապետութեան երկար շրջանին վերջին տարիներուն մէջ, ինչպէս նաև իր կեանքի վերջին օրերուն յուզումները, փոխարինուեցան այն ցաւակցական ինքնաբոլի արտայայտութիւններով որոնք եղան Բերա և Սամաթիա, թէ՛ պաշտօնական մարմիններու ու զանազան դասակարգէ ծանօթ անձնաւորութեանց կողմէ և թէ՛ ժողովրդեան կողմէ։ Սամաթիացիները իբրև իրենց բարերարը կը ճանչնային զինքը, վասն զի ամէն առթիւ կ'օգնէր այդ մեծ թաղին կարօտեալներուն, աղքատ դպրոցականներուն. Բերա ալ ո'չ նուազ նպաստաւորութեամբ է ամէն առթիւ։ Հանգուցեալը որչափ բարեպաշտ՝ այնքան ալ ողորմած էր. բայց կը սիրէր գիտակցօրէն բարիք ընել. աչքը գոց տուողներէն չէր և անոնք որ միջնորդ եղած են իր բարեպաշտական նուիրատուութեանց, —եկեղեցականներ մեծ մասով, —կը պատմեն թէ խօսելու, ողորդելու, սիրտը չարժելու մասնաւոր ձեւեր պէտք էին՝ զինքը հաւանեցնելու համար. բայց անդամ մը որ հաւանէր, ալ առատաձեռն կը դառնար։

Խրոխտ բնաւորութիւն մը և հաստատ սկզբունքներ ունէր, որոնց համար կը մաքառէր, կը վիճաբանէր. ու... կրկնապատիկը կուտար։ Այնչափ զիւրազգած էր հանրային կամ անհատական կարօտութեան մը համար, երբ համոզում գոյացնէր պէտքին անմիջականութեանը, որքան զիւրազրգիւ՝ իր դաշափարներուն հակասող, իր արժանապատուութեանը դպչող խօսքի մը արձագանգէն կամ՝ դրուածքի մը տպաւորութենէն։ Ներսէս եպիսկ. Ասլանեան, Բերայի քարոզիչ եղած թուականին, մէկէ աւելի անգամներ ակառատեա եղած է այս տեսակ դէպքերու որոնց մէջ, վերջ ի վերջոյ գթութեան զգացումը կը յաղթանակէր ու Յակոբեան էֆ. քսակը կը բանար, —բայց կանխաւ իր զիտողութիւնները ընելէ, ներքին ցաւ մը եթէ զգա-

ցած ունէր՝ անկեղծապէս արտայայտելէ ետքը: Զինքը մօտէն, մտերմաբար ճանչցողները կը պատմեն թէ Միքայէլ էֆ.ի բնաւորութեան էն զօրաւոր կողմը անկեղծութիւնն էր ու յամառութիւնը. — բառին լաւագոյն իմաստովը, այսինքն caractèrի տէր մարդու նշանակութեամբ:

Ասլանեան Սրբազանին անունը տուի. իրմէ լսած եմ սա մանրադէպը՝ իրական ու յատկանշանական: Միքայէլ էֆ. Յակոբեան, Զատկի և Ծնունդի շաբաթ իրիկունները եկեղեցի եկողներուն առաջիններէն մէկը կ'ըլլար անխափան. անգամ մը միայն կը թացակայի, և Ներսէս եպիսկ.՝ այն ատեն տակաւին վարդապետ, պարապ տեսնելով անոր տեղը՝ դասին ետին, կը հետաքրքրուի: Փամերգութեանց աւարտումէն ետքը, շնչասպառ կը հասնի Միքայէլ էֆ.ն, քիչ մը այլայլած՝ բարկացոտ երեւոյթով մը:

— Ի՞նչ ունիք, Միքայէլ էֆ., կը հարցնէ քարոզիչը, Թաղ. Խորհրդարանին մէջ:

— Ոչինչ, Հայր սուրբ, կը պատասխանէ Հիւանդանոցի Հոգաբարձութեան ատենապետը:

Բայց քիչ մը հանդարտելէն ետքը, կը պատմէ քանի մը բառով: Երկու տեղի խոստապարտուած էր Հիւանդանոցի պատասպարեալներուն ձերմակեղէնի պատրաստութեան համար, որոնց մէկին գինը վճարել յանձն առած էր ինք՝ Միքայէլ էֆ.ն և միւսինը ուրիշ հարուստ ազգային մը. — 150ական ոսկի: Նոյն առաւօտուն հասած էին ծրարները և հարկ էր փոխարժէքը հատուցանելով Հիւանդանոց փոխադրել տալ. Միքայէլ էֆ. լուր կը խրկէ իր «նուիրակցին» որ կը պատասխանէ թէ ինք նայմիս եղած է. անձամբ կ'երթայ անոր գրասենեակը, գիտել տալու համար թէ տրուած բարեսիրական խոստում մը ինչպէ՞ս կարելի էր ետ առնել. բայց միւսը անդրդուելի կը մնայ: Յակոբեան էֆ. կը վերադառնայ, կը վճարէ 300 ոսկին ամբողջ, ձերմակեղէնցունները փոխադրել կուտայ Նէտի—Գուլէ, — զոր իրեն համար խղճի պարտք մը սեպած էր, — ու յետոյ միայն կուգայ եկեղեցի, երբ ժամաւորները կը ցրուէին:

Յայտնապէս կ'երեւար որ, — կ'աւելցնէր Ասլանեան Սրբազան այս բաւական ինչ պատմութիւնը ընելէն ետք, — Միքայէլ էֆ.ն հեղացած էր ո՛չ թէ 150ի տեղ մէկ ձեռքէ 300 ոսկի նուիրած ըլլալուն, այլ ... Խթման ժամերգութեան հասած չըլլալուն համար:

Աւանդական էին նաև իր հինգշաբթիի ուխտագնացութիւնները Ղալաթիոյ եկեղեցին ուր կը կենար երկիւղած ինքամիտիումով մը: Եկեղեցիէ ու Հիւանդանոցէ ուրիշ որ և է տեղ չէր տեսնուէր գրեթէ, թէև կը հրաւիրուէր ամէն կրթական, բարեգործական կամ գրական հանդէսներու: Շաբթուան մէջ որոշեալ օրեր, կը յաճախէր Մեծ—Նոր Խանի իր գրասենեակը, ուր ամիրայական թուականներէ մնացած շուք մը կար կարծես և որուն կամարներուն տակ մուտ չէին դրած եւրոպական ոճով գրասենեակներու նորութիւնները: Հո՞ն էր որ կը դիմէին իրեն չքաւորներ, աղքատներ, նպաստընկալներ: Աղմուկ չիկար այդ գրասենեակին մէջ. ամէն բան հանգարտ էր ու խաղաղիկ:

Զմեռը՝ Բերա ու ամառը՝ Պէօլիւքտէրէ, Միքայէլ էֆ. Յակոբեան բարեկեցիկ հասառուի մը կեանքը կը վարէր, իր Տիկնոջ ու զաւակներուն գուրգուրանքին ու յարգանքին մշտաւ առարկայ: Շատ իրիկուն, կը տեսնէինք զինքը Բանկալթիի շիտակ ճամբուն երկայնքը ուր հանդարտ քայլերով կ'ընթանար մարդանքի համար, ձեռքերը բալթոյին դըրպանը, մտախոհ երեւոյթով մը, առանց հետաքրքրուելու շուրջի աղմուկներէն ու կառքերու երթեւեկէն. իր մելամաղձոտ ու նիհար դէմքը և արգէն իսկ ալեւորած մօրուքը կը յայտնէին թէ բաւական յառաջացած է կեանքի մէջ և մարմնով ու մտքով վաստակաբեկ: Եւ արդար հանգիստ մը կը վայելէր տաճնեակ տարիներէ ի վեր:

Ու հիմայ որ քնաց իր յաւիտեանական հանգիստը վայելել Ս. Գէորգ եկեղեցւոյ չըջափակին մէջ, իբրև նախասիրական վայրը իր բարեպաշտիկ զգացումներուն, կըզգանք թէ այս մահով կ'անհետանայ ծանօթ և յարգուած դէմք մըն ալ մեր բարեգործ—հարուստներու շարքէն: Դամբանախօսները, իր

դադարաւոր անգամ, մաղթեցին որ Միքայէլ էֆ. Յակոբեանի սերունդը հետեւող ըլլայ անոր բարեգործութեանց շաւղին. և նոյն իսկ այդ դադարը փոս-իջուցուած վայր-կեանքին՝ առաջին օրինակը տուաւ իր որդին Գրիգոր էֆ. Յակոբեան, — բարեգործութեան նախափորձ մը ընելով ինքնաբեր ու ինքնա-տիպ եղանակով մը որ ուղղակի սրտէ կը բղխէր: Սամաթիացի աղքատիկ տղայ մը, որ անգործ հայր մը միայն ունի, թաղման շարականին երգեցողութիւնը այնքան գեղեցիկ ձայնով ու զոհողութեան կերպով կատարած էր, որ թաղումէն ետքը՝ Գրիգոր էֆ. նմէկ կողմ կանչելով այդ պատանին ու արտասուածօր աչքերով համբուրելով ճակատը, դրամական պարգէն մը տուաւ ու յանձնարարեց որ իր դրամենակը ներկայանայ յառաջիկային, անշուշտ պաշտպանութիւն ընծա-յելու համար:

Այս դէպքը, զոր օրաթերթերը պատմեցին յուզարկաւորութեան նկարագրութեան մէջ, իր պարզութեանը մէջ նշանակալից կը գտնեմք և վեր կը դասեմք Սամաթիոյ Աղքատախնամին եղած դրամական նուէրներէն և յարակից մեծկակ նպաստներէ՝ հանգուցելոյն հոգւոյն համար: Գրիգոր էֆ. Յակոբեանի նման գեղարուեստասէր, գրասէր ու աշխարհիկ երիտասարդ մը՝ իր սիրեցեալ հօրը նոր զոհողութեան գերեզմանին առջև վայրկենապէս կիրաքցէր անոր բարեպաշտական զգացումները ու բարեգործելու ինքնայատուկ եղանակը եւ տարէց անձի մը՝ վայել կարեկցու-թիւն մը կունենար աղքատիկ տղու մը հանդէպ որուն ապագային ապահովութիւնը կըստանձնէր, անոր անցողակի ուրախութիւն մը պատճառելէ դատ:

Հայրազունի հարուստ երիտասարդին այս գուրգուրանքը՝ մայրազունի աղքատ տղու մը հանդէպ, բարեգուշակ և յուսատու բան մը ունի իր մէջ, թէ Միքայէլ էֆ. Յակոբեանի բարեգործութիւնները աւանդաբար պիտի պահպանուին ու շարունակուին իր ընտանիքին ու զաւակներուն կողմէ:

ՄԵՆԱՍԻՐ

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Քափուրեցիին մեակութիւնը. — Եւրոպացի-ներու հոգը. — Կից մը որ շարունակ կը բնա-նայ՝ առանց արթննալու:

Քափուրեցիին մեակութիւնը. — Ամէն մարդու ծանօթ է արդէն Քափուրը (camphre, քեաֆիրի), որ իր կարգ մը յատկութիւններով ու բուժիչ հանգամանքներով այնքան սիրելի դեղ մըն է բժիշկներուն և կէս-բժիշկ տանտիկիներուն: Բժիշկներէն ոմանք, ինչպէս Տօքթ. Ռասքայլ, (որ ծանօթ է իր ամէն տարի հրատարակած բժշկարաններովը, պատրաստուած յատկապէս ընտանիքներու համար,) այն աստիճան համոզուած ու հաւատացած են քափուրին ունեցած լաւ յատկութիւններուն որ, գրեթէ իրենց բոլոր հիւանդներուն, ինչ որ ալ ըլլայ հիւանդութեան տեսակը կամ հանգամանքը, ի մէջ այլոց յանձնարարած են նաև քափուրի ու և է բաղադրութիւն մը, իբր թէ համայնադեղ մը եղած ըլլար այն:

Քափուրեցին, որ այսօր ձաքոնէն ու Չինաստանէն միայն կ'արտածուի, կ'աճի Արևելեան Ասիոյ և մասնաւորապէս Փորմոզա կղզւոյն և ձաքոնի հարաւային կղզիներուն ու Չինաստանի հարաւ-արեւելեան նահանգներուն մէջ. կը պատկանի սարդենիներու (թէֆնէի ցեղ) ընտանիքին: Ծառեր և բոյսեր կան որոնք առաւել կամ նուազ քանակութեամբ կը պարունակեն քափուրը իրենց մէջ. հոտաւէտ բոյսերուն մէջ, օրինակի համար, լավանտը, խնկենին (romarin, մարզանոնը կամ մարեմիտտը (marjolaine, մանճուրանա) և չրթնաձև (labiées) ընտանիքին պատկանող կարգ մը ուրիշ բոյսեր: Սակայն ամէնէն շատ քափուր պարունակողն է քափուրային կինամոմոն (cinnamomum camphora) կոչուած ծառը, որ մշտադաւար է և կը պատկանի նորէն սարդենիներու ցեղին և շատ կը բարձրանայ:

Քափուրը հանելու համար ծառը կտոր կտոր կ'ընեն և երկաթէ կաթսայի մը մէջ

լաւ մը կ'ենացնեն: Կաթսան դոցուած է խեցեղէն. գմբեթարդ խուփով մը, որուն ներսի կողմը, բրինձի յարդերէ շինուած առասաններով ծածկուած է: Քափուրը ջուրին շոգիէն զտուելով կ'երթայ կը նստի խոշորին առասաններուն վրայ՝ գորշագոյն փոշի ձեւով. ու այս փոշին յետոյ Եւրոպա կը ղրկուի զտուելու և մաքրուելու համար:

Քափուրը հաստատուն, բիւրեղացած, սպիտակ և թափանցիկ նիւթ մըն է. իրեն յատուկ սուր հոտ մը ունի. համը լեղի է և զովացուցիչ. ջուրի մէջ քիչ, իսկ ալքովի, եթերի և իւղերու մէջ առատօրէն կը լուծուի: Զուրէն աւելի թեթեւ է. բայց օդին մէջ մնալով կը ցնդի: Ճերմակ բոցով մը կը վառի:

Քափուրին սուր հոտը որդերուն և միջատներուն համար մահաբեր է. կը գործածուի մուշտակները և ասուկեղէնները ցեցերէ ազատ, ինչպէս նաև կենդանաբանական հաւաքածոները անարատ ու անապական պահելու համար: Բժշկութեան մէջ իբր գրգռուիչ, քրտնեցուցիչ և հակափուռ (փտումէ զերծ պահող) կը գործածուի. ջրղերու հիւանդութեանց և յօդացաւի (եէլ) չփումներու մէջ օգտակար յատկութիւններ կը ներկայացնէ: Շատ քիչ քանակութեամբ, գրեթէ օրը 25 սանթիլրամի չափ ներսէն ալ գործածելի է. սակայն աւելին՝ զօրաւոր թոյն է:

Ճարմանական կառավարութիւնը գրեթէ մենավաճառի վերածած է քափուրի արտադրութիւնը, ըստ որում ամէնէն շատ արտադրող երկիրը իրենն է, այնպէս որ վերջերս Չինացիները, ինչպէս նաև Ֆրանսացիք փորձեր կ'ընեն քափուրի այս մենավաճառին դէմ մրցելու: Չինացիք իրենց ուշադրութիւնը դարձուցած են այս չահաբեր նիւթին արտադրութեան եղանակներուն ու չահագործման կերպին վրայ. ամենուրեք սկսած են արդէն քափուրի մշակութեան մեծ եռանդով: Նոյնպէս, Սէյլան կղզւոյն և Ֆլորիտայի մէջ նոյն այս փորձերը առաջ կը տարուին: Իսկ Ֆրանսացիք մեծ դետիներ յատկացնելով քափուրի մշակութեան, լաւ արդիւնքներ ձեռք բերած են և յուսալի է որ,

ըստ նորագոյն տեղեկութեանց, հետզհետէ պիտի դիւրանայ այս օգտաւէտ նիւթին արտադրութիւնը ու քիչ ատենէն կարելի պիտի ըլլայ մրցիլ Ճաբոնի քափուրին հետ: Քափուրը, անոր համար մեծ ընդունելութիւն կը գտնէ վաճառականութեան մէջ, որով հետեւ բժշկական և միջատասպան դեղ մը ըլլալէ դատ, նորագոյն փորձերու համաձայն կը մտնէ նաև կարգ մը ուրիշ ճարտարուեստական պատրաստութիւններու մէջ:

Եւրոպացիներու հոսք.— L'Anthropologie անուն հանդէսին փետրուարի թիւին մէջ Պ. Լ. Լալօ, Ճաբոնցի բժիշկիմը, Տօքթ. Պիւնդարօ Ստաշիի մէկ հին դիտողութիւնը կը ծանօթացնէ՝ Եւրոպացիներու հոտին վրայ: Կ'ըսէ թէ Ճաբոնցիները կատարելապէս կը ճանչնան Եւրոպացիները, մանաւանդ կիները՝ այս յատկանշական հոտէն: Ըստ ճաբոնցի բժշկին, այս հոտը, որ ապահովաբար լաւանտայի հոտէն տարբեր բան մըն է, կը փոխուի մարդուն և անոր տարիքին համեմատ: Սուր ու ծթած է, և չափահասներուն վրայ իր կատարելութեան կը հասնի և չափազանց անախորժ կը դառնայ Ճաբոնցիներուն, որոնք սակայն, եթէ երկար ատեն մնան Եւրոպայի մէջ, կը վարժուին ու բնաւ չեն առներ այդ մարդոց հոտը. իսկ կիներու հոտը հեշտաւէտ դաղափարներ կը ներշնչէ իրենց: Այս յատկանշական հոտը կ'արտադրուի անուրթին խոռոջէն (գօթուֆ ալթր) և երբ Ճաբոնցի մըն ալ դիպուածաւ մարմնոյն այդ մասին վրայ ունենայ յիշեալ անախորժ բուրմունքը, գրեթէ չի կրնար ամուսնանալ՝ ամենուրեք մերժումներու հանդիպելով և նոյն իսկ ազատ կը կացուցանեն զայն զինուորական ծառայութենէ:

Պ. Լալօ կը կարծէ թէ Եւրոպացի ցեղն է պատճառը մարմնոյն այս հոտին. ասկէ դատ սակայն, անուրանալի է որ, կ'ըսէ, հազուադէպ ձեւն ալ մեծապէս կը նպաստէ զայն արտադրելու: Եւրոպացիք թէ՛ ծանր և թէ՛ սեղմուած ու իրանին փակչող հագուստներ կը հագնին և այս դրութիւնը պատճառ կ'ըլլայ որ մարմնոյն մորթային արտաշնչութիւնները օդէ զուրկ մնալով խը-

մորուհին և արտադրեն այդ անախորժ բու-
րումը: Մինչդեռ ճաբոնցիք աւելի թեթեւ
ու լայն դգեստներ կը հագնին: Կը կարծուի
նաեւ որ սնունդի տեսակն ալ կարեւոր աղբակ
մըն է այս հոտին. մասկերութիւնը, Եւրո-
պացոց քով, աւելի կը նպաստէ քան բուսա-
կերութիւնը, ըստ որում ճաբոնցիք աւելի
այս վերջնոյն յարած են միջավայրի բերմամբ:

Կիմ մը որ քսան քսաւի անքնդհաս կը
քնանայ. — 1904 մայիս 8ի նիստին մէջ՝ Բա-
րիդու Բժշկական Կաճառին ներկայացուեցաւ
Պ. Լանսըրոյի կողմէ, մանրամասն ուսում-
նաթիւթիւն մը՝ կնոջ մը 20 տարուան շա-
րունակական քնէութեան վրայ, որուն գըլ-
խաւոր մասերը, իրենց հետաքրքրականու-
թեան համար կ'արտագրեմ Մասիսի ընթեր-
ցողներուն համար: Պոլսոյ օրագիրները 5—6
ամիս առաջ ծանուցին արդէն այդ կնոջ
մահը:

Տիկին Մարկրիթ Պ. ի (այս էր այդ կնոջ
անունը) հայրը աղքատ և ալքոլամոլ էր և
ընտանեկան յարկէն խոյս տուած. իսկ մայրը,
իր երիտասարդութեանը, արգանդախեղդէ
(hystérie) (*) քանիցս բռնուած կին մըն էր,
որ Մարկրիթէն փոքր, ուրիշ երկու աղջիկներ
ալ ունեցած էր: Այս աղջիկներէն մէկը իր
աղայութեանը քնաչըլութեան քանի մը
նշաններ ցոյց տուաւ, որմէ յետոյ արգան-
դախեղդի նոսպաներ ունեցաւ: Իսկ միւս
աղջիկը կրօնաւորունէի եղաւ՝ արտասովոր
կրօնասիրութենէ մը մղուած:

(*) Hystérie, Արգանդախեղդ: — Ըստ բժշ-
կականութեան, ջղային կիներու յատուկ այն
հիւանդութիւնն է, որ բարախում, տագնապ,
երկիւղալի երազներ և արգանդի ու որո-
վայնի անհանգստութիւններ յառաջ կը բերէ,
սիրտը կը գոցուի, կոկորդը կը սեղմուի:
Ախտանիշներն են յօրանջում, գունատութիւն,
սարսուռ ու անմիջապէս յետոյ սաստիկ ջեր-
մութիւն: Երբեմն սոսկալի գլխու ցաւ կը
պատճառէ: Աւելի ջղային օրիորդներու կը
պատահի իրենց առոյգ հասակին մէջ, ու
կրնայ յառաջ գալ բարոյական յուզմունքնե-
րէ, նախանձէ, տախիանքէ, տխրութենէ եւ
արեան շրջանի անկանոնութենէ:

Մարկրիթ միշտ փափկակազմ մնացած
էր. 1882ին յլի էր. ու իր պզտիկ քրոջ
հետ, միեւնոյն օրը, աղաբերքի երկունքի
բռնուելով, երկուքն ալ ծնան. սակայն այս
դուգադիպութիւնը մասնաւոր ուշադրութիւն
հրաւիրեց ու 1883 մայիս 31ին, կառավա-
րական պաշտօնեաներ, այս դադանիքին
պատճառը քննելու համար քննութիւն մը
բանալու պէտք ունեցան: Մարկրիթի բնակած
խրճիթին մէջ. դեռատի կինը այս անակըն-
կալ այցելութենէն այն աստիճան վախցաւ
որ — ժամ մը ետքը արգանդախեղդէ բռնուե-
ցաւ. 24 ժամ տեւեց այս որու հետեւանքով
քնացաւ: Հետեւեալ եւ յաջորդ օրերը իր
վիճակը անփոփոխ էր. քունը կը շարունակ-
ուէր առանց զարթնումի. խորհեցան կերակ-
րել զայն արուեստական կերպով ու կաթ,
հաւկիթի դեղնուց, մսի ջուր, դինի և բեր-
դոն կուտային անոր: Իր թմրութեանը հան-
դարտ վիճակներուն մէջ ատեն ատեն դըն-
դերային դօրաւոր ցնցումներ կ'ունենար և
այս պատճառաւ պէտք կ'ըլլար բազմաթիւ
անձերու ներկայութեան, որպէս զի կարելի
ըլլար զսպել զայն: Ասկէ դատ, ճանաչողու-
թիւնը բոլորովին կորսուած և իմացականու-
թիւնը դադրած էր: Այս վիճակին մէջ ընդ-
հանուր զգայաղրկութեան մը մատնուած էր.
միայն կրկնակրին միջին մասը պահած էր
իր զգացողութիւնը: Չորս տարի անցաւ.
1887ին, Մարկրիթ պառկած, խիստ նիհար
էր, այտերը տոգոյն և փոսացած, փորը խո-
ռովացած և դէմքի արտայայտութիւնը կոր-
սուած էր, առանց սակայն դիակնային ըլ-
լալու: Ճարպային հիւսուածք գրեթէ բոլո-
րովին աներեւութացած էր և մերթ ընդ-
մերթ դէմքը կը գունաւորուէր կարճ միջոցի
մը համար սակայն. հանդարտ ու խոր քունի
մէջ ընկղմած՝ վախտ կնոջ մը դէմքը ունէր:
Շնչառութիւնը հանդարտ ու յամրա-
ցած, բազկերակի բախումները հազիւ թէ
լսելի՝ բայց արագ էին: Անութիւն տակ
բարեխառնութիւնը 37⁰ն 37⁰1 կը փոխուէր:
Մորթային զգայաղրկութիւնը ամբողջական
էր. բայց մորթին տակէն կատարուած նե-
րարկումներու շնորհիւ կարելի եղաւ հաս-

ստատել թէ զգացողութիւնը կը վերերեւէր վայրկենապէս և կը դադրէր՝ երբ ներարկութեանը դադարէին: 1887էն ետքը, հիւանդը կայուն վիճակի մը հասաւ: 1902ին ձախ յառաջարկէին վրայ, մէկ ֆրանքնոցի տաճարածութեամբ ունեցք մը գոյացաւ ու յետոյ սկսաւ թարախոտիլ: այս վայրկենէն սկսեալ հիւանդը հետզհետէ տկարացաւ և 1903 մայիս 17ին աջ ոտքին ետին, ճիշդ յառաջարկէին նման, այտուցք մը գոյացաւ որ սակայն Ժամանակ չունեցաւ շարաւոտելու: Ասկէ դատ, հիւանդը սկսաւ հազալ և 1903 մայիս 23ին բռնուեցաւ նորէն արդանդախեղդէ մը որ շատ կը նմանէր իր հիւանդութեան սկզբնաւորութեան ատեն պատահածին և որ անկանոն ընդհատումներով կրկնուեցաւ մինչև կէս օրէ յետոյ: Անկէ ետքը, իր բոլոր անդամները իրենց առջի առողջ վիճակը գտան և հիւանդին աչքերը բացուեցան, միայն ծնօտը մնաց կարկամեալ: Մայիս 24ին, առտուան ժամ 7ին նորէն անկում մը ունեցաւ արդանդախեղդի նոպայէ մը, որ անընդհատ 4 ժամ տեւեց և որու հետեւանքով կարկամած ծնօտն ալ բացուեցաւ: Հիւանդը առանց սակայն կատարելապէս արթնցած ըլլալու, կարողացաւ անկողնին վրայ նստիլ: Մայիս 27ին, զնդերային շարժումներ ունեցաւ: Ղէմքին վրայէն քօղ մը հանելու պէս, ձեռքը աչքերուն առջեւէն անցուց: Բացաւ աչքերը ու այնպէս կը թուէր թէ կը տեսնէր ու կը լսէր և կը ջանար հասկնալ իր շուրջը խօսուածները: Մայիս 28ին, բոլորովին արթնցաւ և նախկին զգացողութիւնը վերահաստատուեցաւ իր մէջ: Վերջապէս 27 մայիսին տկարացաւ և սոսկալի կերպով կը հազար, այն իրիկունն իսկ ողելարեցաւ և հետեւեալ առտուն մեռաւ:

Բժիշկները, ամէն օր, ուշադիր հետեւած էին Մարկիթի ախտաբանական այս քունին և անոր ստացած առօրեայ զանազան երևուոյթներուն: Կ'ըսեն թէ, արթննալէն անմիջապէս յետոյ, հիւանդը կը ճանչնար, թէ և զժուարօրէն, զինքը չըջապատող բոլոր անձերը: Երբ թուականին մէջ գտնուիլը հարցուց, մոռցած էր իր քունէն անմիջապէս

առաջ պատահած նշանակելի դէպքերը, մինչդեռ աւելի հիները միտքը պահած էր. մասնկութեան լեզուն կը խօսէր տակաւին, վասն զի մոռցած էր պատանեկութեանը մէջ խօսածը. իմացականութիւնը տեղն էր այդ վայրկենին և ճշդութեամբ պատասխան կուտար իրեն ուղղուած հարցումներուն. առջի օրուան խօսուած բանը, հետեւեալ օրը կը յիշէր, այնպէս որ ո և է ախտանշան չիկար՝ իր ջղային կեդրոններուն մէջ գործարանի մը վիստուիլը յայտնող: Իրեն տրուած կերակուրները (միսի ջուր, կաթ, հաւկիթի դեղնուց) կանոնաւորապէս կ'ընդունէր՝ առանց ստամոքսի ո և է անհանգստութեան:

Պ. Լանսըրօ, վերապահութեամբ սակայն, մարդոց այս ախտաբանական քունը կը նմանցընէ այն կարգ մը կենդանիներու քունին, որ կը կոչուի ամեռնայից քնութիւն (hibernation): Բնութեան այս շրջանին մէջ մարմնոյն կորուստները շատ չնչին ըլլալով, կենդանիները սնունդի պէտք չեն զգար. արեան շրջանը կը յամրանայ ընդհանրապէս. շունչի սուրբեւառը կը նուազի, կենդանական այրումը կը տկարանայ, անանկ որ մարմնոյն մէջ գտնուած ճարպի պաշարը բաւական կ'ըլլայ ապրեցնելու, — պարագայ մը, որ կը բացատրէ թէ այս հիւանդն ալ 20 տարի շարունակ 1883—1903) օրական չորս անգամ դգալ մը բերդոն, զաւաթ մ կաթ և երկու հաւկիթի դեղնուց առնելով կրցած է ապրիլ: Սակայն հիւանդը քնախոտին սնմիջական աղդեցութենէն չէ որ մեռած է. մահը անօթութեան և անսնունդ մնալուն հետեւանքն է, որ զինքը պատրաստած ևն հիւսմախտի (tuberculose), և այս է իրական պատճառը իր մահուան:

Բունի տեսակին դալով, տարակոյս չկայ որ արդանդախեղդի (hystérie) հետեւանք է: Ամէն պարագայի մէջ, այս հիւանդութեան ամէնէն հետաքրքրական կողմը տեղութիւնն ու վախճանն է:

ՆՈՒՊՈՐ

ՄԵՐԸ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՀԱՄԵՄԱՏ

(ՆՈՐԱՎԷՊ ԻԶՄԻՐԵԱՆ ԿԵԱՆՔԷ)

Ա.

Մէկը աշակերտ էր և միւսը աշակերտուհի երբ զիրար ճանչցան :

Հինգշաբթի, կէսօրէ վերջ, Ֆրանսական վարժարաններու մէջ դասերը կը դադրեցնէին և եթէ օդը նպաստաւոր ըլլար, Ֆրէնսեր կամ սեռեր, իրենց խնամոց յանձնուած դպրոցականները պտոյտի կը տանէին :

Ճիշդ մայիսի մէջ հինգշաբթի մըն էր, երբ քարափին վրայ, Սքոթթինկ Բլիւպէ քիչ վար, զոյգ զոյգ ընթացող և կապտագլու երկսեռ աշակերտներ զիրար խաչածներ էին ու իրարու մօտիկ անցքին ատեն, այդ սիրուն պատանիներու և շնորհալի աղջիկներու երամին մէջ, ձախէն դացող երկուսն աչքեր, աչքէն եկող երկու ծովկապոյտները միայն տեսած էին :

Բանի մը հինգշաբթիներ ևս, և ահա ակնարկները զիրար աւելի անոյշ կը դիմաւորէին, աւելի խօսուէն կ'ըլլային : Սեւին վառվռուն թովքին ու կապոյտին մարմրուն զիւթանքին մէջ երկու սիրտեր կային, որոնց ուժգին զարկը դէմքին արևը կը քաշէր ու ժպտա՞ր՝ դեռ նայուածքին մէջ քօզածածուկ՝ կըսկսէր շրթունքի երկու ծայրերը սիրուն բօթեր կազմել տալ : Դպրոցականի անմեղ, սիրուն, առաջին սէրն էր որ կը փթթէր այդ կոյս սիրտերուն մէջ : Ճակատագրային վայրկեաններ, որոնք միայն կեանքի դառնութեանց կանխահաս դիտակցութիւնը կուտան :

Զիրար մօտէն ճանչնալու պէտք մը կը շնչուէր իրենց մէջ : Բովիշներնուն հարցնել միտքերնուն իսկ չէ անցներ : Ստիկա անսովոր բան մը չը պիտի ըլլար դպրոցականներու համար, և սակայն, հիմակ զգացածին այնչափ տարօրինակ էր ու նոր որ ակամայ վախ մը աւնէին իրենց մտածումները մատնելու : Դեռ սէրը իրենց մէջ ուրիշի մը քացուելու, պոռթկալու բնական վիճակը չէր առած :

Անշուշտ տղուն՝ Արչակին կիյնար նախաձեռնարկ մ'ընել. ուստի դպրոցէ փախուստի օր մը, Սոլարիի դիմացի լայն փողոցին ծայրը կ'երթար գեգերելու, նայուածքը սեւեռած այն ցածուկ դրան որ սեռերու դպրոցին յետսակողմեան ներքին նեղ անցքին ծայրը, հակապատկեր մը կը կաղմէր շուրջի սիրուն տուներու ա'լ աւելի սիրուն դրսերեւոյթին մէջ : Արդէն գիտակից կէսօրուան արձակուրդի ժամուն՝ շատ չսպասեց հոն : Կապոյտ գլուխներու շարք մը ծայր տուած էր : Գնաց անոր մէջ խառնուելու ու վերջին ելլողներուն մէջ նշմարեց զայն՝ աղուոր Ռօզը, Սրտի արտփիւններն ալ եկան աւելնալ նախկին արտմաշուքին, որովհետեւ օրերէ ի վեր անոր ինչ ազդէ ըլլալն ալ հասկնալու հետաքրքրութիւնը ունէր, որ բարեբաղդաբար քիչ ատենէն իր գոհացումը պիտի ունենար :

Այս անակնկալ հանդիպումը յանկարծակիի բերէր էր Ռօզը, որ գլխի անմիջական շարժումը չը հասկնալու համար, թեւը մտած էր ընկերուհիի մը և երկուքն ալ այսպէս համաչափ սկսեցին ընթանալ, ասկից անկից խօսելով : Ետեւէն հաւատարմաբար եկող Արչակին ուրախութիւնը չափ չունեցաւ անշուշտ, երբ հայերէն բառեր եկան ականջին սիրուն մը արձագանգելու համակ սէր պաշտում մայն ակնարկները որով կը պարուէր Ռօզը, իրենց պատասխանները կ'ունենային, երբ սա կողմնակի, ընկերուհիին ուսին վրայէն գողունի ու գոհ նայուածքներ կ'ուղղէր իրեն : Զիրար հասկցեր էին : Հիմակ գիտէին թէ փոխադարձաբար սիրուած են :

Բ.

Տարի մը վերջ երկրորդ մայիսն էր որ կուգար : Ամիսներու գեղեցկագոյնին, այդ վարդերու հոգեցունց ամսուն առջի օրը կիրակի մըն էր :

Իզմիրցին՝ բոլոր մեծ քաղաքներու բնակչութեան պէս՝ սիրահար դաշտերու եւ բաց օդի, գաղջ ու ջինջ այդ առաւօտը մեծ խանդավառութեամբ մը կ'երթար անցընել, Բրօֆթիլեայի երկար ու կանաչադարձ ուղւոյն վրայ : Մէկ կողմը սիրուն հողաբլուր

ներու շարք մը, ամբողջ կանանչ, Հիսարը, որուն քաղաքի հակառակ կողմի ստորոտը կ'երկարէր այդ ճամբան՝ օձապտոյտ առուակի մը առնթեր՝ դիմացի ուրիշ հողաբլուրներու հետ գոյացուած նեղ ու երկար ձորակին մէջ տեղը: Ու սիրուն էր տեսնել այդ հովտին լայնագոյն կէտերուն մէջ, պղտիկ պարտէզ — սրճարանները, որոնք աւելի կանուխ շարժող յաճախորդներով լեցուն՝ երկկողմեայ բազմութեան հանդիսավայրն էին, կանանչներու մէջ, առուակի մը անուշ խոխոնջանքին քով:

Հիսարին ստորոտի ուղին բաց գոյն գլխատներու ցուցադրում մըն էր կանանչներու մէջ, հոս հոն գետեղուած ճերմակ վարդերու նման: Ու անդին հանդիպակաց ճամբուն վրայ կառախումբերն էին որ դէպի Պուճայ կը մագլցէին, անոնք ալ իրենց կարգին պատուհաններէն դուրս ցուցադրելով զբօսաշրջիկներ:

Ժամը առտունն եօթնին արդէն երկար մարդահոսանքէ տարբեր բան մը չկար հոն: Խումբ խումբ ընտանիքներ, մայիսի խինդը երեսներն, ձեռքերն լիլայի, վարդի և այլ սիրուն ծաղիկներու փունջներ, միշտ կը քալէին: Բաւական ստուար անդամներէ բաղկացած ընտանիք մըն ալ կար հոն, որու մէջ կրնայինք տեսնել Արշակն ու Ռօզը քով քովի: Երկօւստեք բարեկամ ընտանիքի մը ընկերացած՝ ա'լ ամէնուն ծանօթ իրեն սէրը հետաքրքիր աչքերէ պահելու հարկէն ազատ՝ կը խօսէին ու կը խօսէին:

Դպրոցէն ելած էին նոյն տարին: Իրենց սէրը, կաշկանդումներէ ազատած՝ խնդրոյն տեղեակ մայրերու լուռ հաւանութեան մէջ զօրաւոր՝ իր բնական ճամբուն կը հետեւէր: Ալ ներկայով չէին զբաղեր. ինչ պէտք էր ճանչնային դիրար: Ապագան կը զբաղեցնէր զիրենք, գալիք կեանքը կը մտածէին, երազներու երկար շարքին ծայր լին տուած: Կեանքը ապրելու պապակը ապագայի խոհերու մէջ իր յագեցումը կուսննար, որ սակայն մարմնոյն ասղնուտքը, սրտին վրդովումը, հոգիին ցունցը միայն կը սաստկացնէր սօթակէզ մարդու մը ընձեռնուած քանի մը կաթիլ ջուրէ տարբեր աղեցութիւն մը չունենալով:

Մինչև Բրօքիթիլեայ դացեր էին ու հոն համախմբուած հաղարաւոր մարդիկը կարծես չէին տեսած: Շուրջի մեծ ծառերու հովանուտին տակ, առուակին կրկին եղերքը կամ քիչ մը վերօք աջ կողմը խումբեր կազմած՝ մեծ մասամբ յոյն ընտանիքներու շարքը իրենց ուշադրութեան առարկայ ըլլալէ հետո էր: Նոյնիսկ, վայրին արուեստականին շատ մօտեցող վայրի գեղեցկութիւնը, անտարբեր կը թողուր զիրենք: Հոն միայն Ռօզը կար Արշակին համար և Արշակ մը Ռօզային համար: Ու վերադարձին, երբ քիչ մը հանգրստանալու և աւանդական կաթը խմելու ու պօրեկն ուտելու համար ետէն մէջ նստած էր ամբողջ ընտանիքը, Արշակ ու Ռօզ դարձեալ քով քովի, մօտի ջաղացքին անդադրում խժտուքին մէջ, իրարու ականջին փստալու անհատնում բաներ կը գտնէին:

Գ.

Երրորդ մայիսի կիսուն, առտուն շատ կանուխ, Պէլավիլայի մօտ նեղ պուլվարի մը երեւոյթը ունեցող սիրուն փողոցի մը մէջ, երկու աղջիկ և սղամարդ մը՝ Լոն քեհիս խաղացողներու տարազով՝ շքեղ երեւոյթով տան մը առջև կանգ կ'առնէին:

Անգլիացիի կատարեալ դիրքէն էին երեքն ալ, յարդագոյն մազերով ու վարդ—կարմիր դէմքով: Աղջիկներէն մեծը՝ Մերին՝ դրան կոճակին վրայ դրաւ մատը ու անա սպասուհիին աղդարարութեամբ, վար կ'իջնէր մեզի ծանօթ Ռօզան ընկերուհիներուն նման հագուստի մը մէջ ա'լ աւելի գեղեցիկ:

Նախորդ տարի, ձմեռնամուտին, Հայնոցէն քարափ փոխադրու եր էին իրենք ալ և «աղնուականացած» ըլլալու յաւակնոտութեամբ՝ իրենց նոր միջավայրին յարմարելու չը հասկըցուած կերպով մը նախկին ինչ յարաբերութիւն ու ունէին հոն էին ձգած, ու աւելի փայլուններուն, աւելի յարմարներուն ի խնդիր եղած: Ռօզ ալ, իր ծնողաց ձրգտումներուն ենթակայ, իր կարգին ինքն ալ մոռցեր էր Արշակը և անոր տեղ ընտրած էր զբացիին սղան, անգլիացին:

Չորան ալ մէկ կարգի վրայ, անգլիական

երկար քայլերով կը յառաջանային քարափին վրայ, երկու ծայրերը՝ քոյրերը և մէջտեղը Ռօզ ու երիտասարդը։ Տեսնողը Ռօզն ալ անդուհի մը պիտի կարծէր, որուն խարտեաչ ազդուորութիւնը քովիններուն չարժուածէին ու խօսուածքին կատարելապէս նման, ա'լ աւելի կը շնչոտէր։

Վայրկեան մը առաջ իրենց խաղալու վայրը հասնելու համար, մերթ կը ցատկոտէին ու մերթ կարծես կը վազէին. ամէն պարագային ալ, սակայն, երիտասարդն ու Ռօզ իրարմէ չը հեռանալու պայմանաւ։ Որովհետեւ, մինչդեռ երկու քոյրերը միապաղաղ, հանդարտ թափանցիկ իւղի խառով մը կարծես ծածկուած ծովը և մակոյկով առաւօտուն լուարձացողներու խումբը կը դիտէին, անդին, այդ երկուքը, ափսոսելի խօսակցութեան մը բռնուած էին որ ալ սովորութեամբ, պարկեշտ կարմրութիւնը չէր բերէր Ռօզի շնորհագեղ դէմքին։

Ընդմիջուեցաւ սակայն իրենց անուշ

գլուխ—գլխին, երբ Մէրի ճիշդ Թեադորը քրքին դիմաց, քարափ մօտեցող մակոյկ մը ցուցնելով ըսաւ Ռօզի.

—Կը տեսնե՞ս սա առջևի կողմը նստած թիւ վարող երիտասարդը։

—Ո՞րը։

—Նա', ա'ն որ սև ֆլանէլ մը հագած է, որուն թեւերը ուսէն վար կտրուած են։

—Է՛հ այո', ի՞նչ կայ որ։

—Քիչ մը առաջ չես գիտեր ի՞նչ դճացի, երբ խոշոր սև աչքերը մեր վրայ սեւեռած՝ կարծես ատելութեամբ արհամարհանքով լի հոսանք մը կը ցայտեցնէր մեր վրայ։

—Խե՛նդ...։

Այս եղաւ ամբողջ պատասխանը և վերսկսաւ իր խօսակցութեան։

Ինչո՞ւ աւելի կարեւորութիւն տար այդ սև աչքերուն, զորոնք երկու մայիս սիրած ըլլալը մոռցնել կուտար հիմակ գտնուած միջավայրն ու կենսապայմանը։

ՊԱՐԷՏ

ՄԱՅԻՍԻ ԶՈՐԻՆ



Մարմանդներուն մէջ ծաղիկներ կը ձիւնեն։
Նոր սերերու կախարդանքովն ըզմայլած՝
Անհոգ կ'անցնիմ լայն խրնկաբոյր եղեմէն
Սիրս առլըցուն երանութեամբ մ'անկասկած։

Նոր սերերու կախարդանքովն ըզմայլած,
Ձեռմ խրնկարկու բրնուքեան մեծ Զարթոնքին,
Անոր յոյզի վեհ վանկերուն անդադարձ
Առձագանգովը կը լեցուի իմ հոգին։

Ձեռմ խրնկարկու՝ բրնուքեան մեծ Զարթոնքին
Եւ բընարիս սրբոս երգին անձնասուր՝
Մայիսի Տօնն ես կ'ողջունեմ հրեհուագին,
Մըսազուարն, հոգիս բերել գերք փետուր։

Եւ բընարիս սրբոս երգին անձնասուր՝
Կոխտելով վարդի զբոգոյն բերքիկներ —
—Հիմ, նե՛նգ սերեր — ես կ'ընթացամ անկիւնն ուր՝
Մայիսի ջիւղ, ծաղկած հոգին է սիրեր։

Մ. ՌԻՂՈՒՐԵԱՆ

ԽՐԱՊԱՐԱՆԱՆ ՆՈՐԵՐ

ԵՐՈՒՍԱԳՆՄԻ ԴՈՐԾԵՐ

Կեդր. Վարչութիւնը իր չորեքշաբթիի նիստին մէջ տուաւ իր վերջնական որոշումը Երուսաղեմի գործերու մասին, քննիչ—պատուիրակ կարգելով Ասլանեան Գէորգ Էֆ.ն որ պետական պաշտօնով Սուրիոյ կողմերը կը գտնուի արդէն։ Ասլանեան Էֆ.ն, ինչպէս յայտնի է, Հանրագումար շինութեանց նախարարութեան մէջ կարեւոր դերք մը ունի՝ իբրեւ փորձ և հմուտ ճարտարագէտ, ու Պատրիարքարանի չրջանակին մէջ՝ ատենապետն է Տնտեսական Խորհուրդին, և իր կարողութեամբը ու պատուաւորութեամբը կատարեալ վստահութիւն ու համարում կը վայելէ։ Երուսաղեմի քննիչ—պատուիրակին պաշտօնը ամէն բանէ առաջ հաշիւներու և շինութեանց քննութեան գործ մըն է, զոր այսքան ձեռնհաս ու կարող անձնաւորութեան մը յանձնելուն համար չնորհաւորութեան արժանի է Խառն Ժողովը։ Միեւնոյն նիստին մէջ որոշուեցաւ որ Պատրիարքարանի յարաբերական դիւանի տեսուչ Կարապետ Էֆ. Խաչատուրեան ընկերանայ Ասլանեան Էֆ.ի, և Երուսաղեմի Ս. Պատրիարքին Կ. Պոլսոյ Փոխանորդ Երէցեան Սրբազան ևս հրաւիրուի Երուսաղէմ գտնուիլ՝ կատարելի քննութեան միջոցին։

Կը սիրենք յուսալ որ Վարչական այս որոշման գործադրութիւնը պիտի զօրէ վերջ մը տալու Երուսաղէմի միաբանական ծանօթ խնդիրներուն ու վէճերուն, և Ասլանեան Էֆ.ի կատարելիք քննութիւնը անաչառօրէն ու յստակօրէն պիտի պարզէ դրամի, հաշիւի ու շինութեանց վերաբերեալ ամէն բան զոր կարգ մը մարդիկ իրենց բան գործ ըրած են այլափոխած ու չափազանցուած գոյներով ներկայացնել հանրութեան ու գայթակղութիւն սերմանել։

Նախորդ շաբթուն այցելեց Ս. Պատրիարք Զօր։

—Հայ Հռոմէականաց Պատրիարքական ընտրութեան կատարումը արտօնող Կայս. Պէրաթը Բ. Դուռնէն ղրկուեցաւ Ատլիէն, ուսկից պիտի հաղորդուի յիշեալ Պատրիարքարանին։

—Ծանօթ մանկաբարձ Տօքթ. Տիգրան փաշա Պապանեան՝ քաղաքային բժշկական վարժարանի մանկաբարձութեան ճիւղին ուսուցչութեան պաշտօնին կոչուեցաւ։

—Գէորգ Էֆ. Ասլանեան որ նահանգներու խճուղիներու քննութեան պաշտօնով կը ճամբորդէ, մայիս 14ին Սիս հասեր և վանք այցելեց Է տեղւոյն և Մէրսինի կառավարական երկրաչափներուն ընկերակցութեամբ։ Տ. Սահակ Ս. Կաթողիկոսը այդ միջոցին Հաճըն գտնուելով, այցելուները ընդունուեր են միաբաններուն կողմէ որոնք դանոնք պտտցուցեր են վանքին ամէն կողմը։

—Կիլիկիոյ Լ. Կաթողիկոսը որ Հաճըն կը գտնուէր, մայիս 9ի կերակրի օրը եկեղեցւոյ մէջ քարոզ խօսելէ և իր հրաժեշտի ողջոյնը ու օրհնութիւնը ժողովրդեան տալէ ետքը, մայիս 12ի չորեքշաբթի օրը մեկնեց Է այդ քաղաքէն՝ հանդիսաւոր թափօրի մը ուղեկցութեամբ որ բաւական տեղ ընկերակցեր է Ն. Ամենապատուութեան, Թափօրը մինչև Քիլիկիէն—Չայը կոչուած 3 ժամ հեռաւորութիւն ունեցող տեղը երթալով, հոն՝ գետափին մօտ, մարգագետնին վրայ փոխանակուեր են հրաժեշտի վերջին ողջոյնները։ Ս. Կաթողիկոսը իրեն ընծայուած պատիւներուն ու ցոյց տրուած համակրութեան համար գոհունակութիւն յայտնելով հայրական յորդորներ ուղղեց Է ներկայ Թափ. Խորհուրդի և Հոգաբարձութեան անդամներուն որ աշխատին եկեղեցւոյ պայծառութեան ու կրթական յարկերու յառաջդիմութեան։

—Կեդր. վարժարանի բերանացի քնննութիւնները պիտի սկսին յառաջիկայ երկուշաբթի և պիտի տեսնեն մէկ ամիս, մէկ քանի օր ընդմիջմամբ տեղի ունենալով քնննութիւնները այլ և այլ ճիւղերու վրայ։ Առա-

ջին քննութիւնն է կրօնագիտութիւնն որուն ներկայ պիտի գտնուի Ս. Պատրիարքը իբրեւ երբեմնի ուսուցիչ նոյն ճիւղին այս կրթական հաստատութեան մէջ։ Ուրիշ բարձրաստիճան եկեղեցականներ և ծանօթ անձնաւորութիւններ ալ հրաւիրուած են իրենց մասնագիտութեան վերաբերեալ առարկաներու քննութեանց ներկայ գտնուիլ։ Խնամակալութեան փափաքին համեմատ, Ս. Պատրիարքը մասնաւոր գորով մը խնդրած է կրթական նախարարութեանէն, որպէս զի յատուկ ներկայացուցիչ մը նշանակուի, արաբերէնի, պարսկերէնի և օսմաներէնի ինչպէս նաև օսմանեան պատմութեան քննութեան, որուն համար որոշուած է յունիս 26ի շաբաթ օրը։

— Պողոս փաշա Նուպար 400 անգլ. ոսկի նուիրեր է Գահիրէի ազգ. վարժարանին վերաշինութեան ի նպաստ։

— Պ. Սեդրաք Ն. Ատուրեան, 1895ին չրջնաւարտ Մարզուանի գօլէճէն, որ այդ թուականէն ի վեր հայերէն լեզուի ուսուցիչ էր ամերիկեան վարժարանին մէջ ի Թալաս, եւ տարիէ մը ի վեր Արմաշի Դպրեվանքը կը գտնուէր մայրենի լեզուն կատարելագործելու համար եւ Դուրեան Սրբազանէն մասնաւոր դասեր կ'առնէր հին եւ նոր հայ Մատենադրութեան, նախորդ շաբթուն մեկներ է Արմաշէն դէպի Կեսարիա։ Պ. Ատուրեան կ'երթայ Թալասի մէջ վերստանձնել իր ուսուցչական նախկին պաշտօնը։

— Տ. Մուշեղ Մ. Վրդ. որ երկու շաբաթ առաջ Արմաշ ուղեւորած էր, Կ. Պոլիս վերադարձու։

Այրի Տիկին Մ. Յակոբեան, Տիար Դրեգոր Մ. Յակոբեան, Օր. Իսկուհի Մ. Յակոբեան, Տիար Յարութիւն Մ. Յակոբեան, Տէր եւ Տիկին Միհրան Յովակիմեան, Տէր եւ Տիկին Սիմոն Գայսէրեան, Յովհաննէս էֆ. Յակոբեան եւ ընտանիք իրենց անկեղծ շնորհակալութիւնը կը յայտնեն այն ամէն բարեկամներուն եւ ծանօթներուն, որոնք բարեհաճեցան մասնակցիլ իրենց դառն ցաւին, ՄԻՔԱՅԷԼ ԷՅ. ՅԱԿՈԲԵԱՆԻ մահուան առթիւ։

ՀԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐԸ

Իւզաներկի գիւտէն ի վեր, որ 1410 թուականին Ժան Վան Էյք Ֆլաման նկարիչին կողմէ եղած է, հարիւրաւոր տարիներ անցած են և այդ տարիներու չրջանին մէջ քաղաքակրթեալ ժողովուրդները արտադրած են նշանաւոր նկարիչներ որոնց կեանքը ու գործերը բաւական ծանօթ է աշխարհի։ Ֆլաման առջի այդ վարպետներէն սկսեալ որոնք իրենց որմնանկարներով (fresque) նշանաւոր են՝ մինչև մեր օրերը ամէն երեսելի նկարիչներու գործերը կը մնան ու կը ցուցադրուին միւզէներու մէջ և զանոնք դիտող ամէն այցելու հիացման և յափշտակութեան մէջ կը մնայ, երբ այդ գործերը արտադրողներուն կեանքի մասին ու է տեղեկութիւն ստանայ և շուտ մը տեղեկ կ'ըլլայ անոր ապրած միջավայրին և կեանքին զըլխաւոր գիծերուն։ Իտալական դպրոցին հետեւողները, ինչպէս նաև հոլանտականին և անգլիականին, ամէնքն ալ իրենց թապլօներու նի թ ընարած են շատ անգամ Ս. Գիրքէն զրուագներ, կրօնական զգացումը այնքան խորին ու վառ էր անոնց մէջ որոնք շատ անգամ տարիներ աշխատած են մասոն մը պատկերացնելու և անոր չրթունքին վրայ կարկառուն ու բնական ժպիտ մը ցուցնելու համար իրենց տաղանդին բոլոր ոյժը գործածած են։

Գալով մեզի, մենք նոյն իսկ գաղափար չ'ենինք և չենք զիտեր թէ որոնք եղած են մեր եկեղեցիներու մէջ գտնուած կարգ մը պատկերներու հեղինակները, որոնցմէ շատեր ճարտար նկարիչներ ըլլալ կը թուին։ Ունինք միթէ հայ նկարչութեան պատմութիւնը։ Մինչև հիմայ ոչ մէկ բանասէր ձեռնարկած է այդպիսի աշխատութեան մը որ կ'երեւայ թէ երկրորդական կարեւորութիւն ունեցող գործ մը կը նկատուի։ Այլադուքիւն տարբեր քանի՜ հոգի կը ճանչնանք իբր հայ պատկերահան։ Բոլորովին անծանօթ անուններու պիտի հանդիպինք երբ ակնարկ մը նետենք մեր եկեղեցական պատկերներուն վրայ և

եթէ վայրկեան մը անոնցմէ շատերը արուեստական քննութեան մը բովէն անցունենք՝ խիստ բնական ու նուրբ արտադրութիւններ պիտի գտնենք։ Միայն եկեղեցիներու անկիւնները մնացող և կամ մասնաւոր անձերու քով պիտի տեսնենք հայ նկարիչներուն գործերը։ Մեր մէջ նկարչական դպրոց մը գոյութիւն ունենալը ապացուցանող ոչ մէկ դիրք կամ յիշատակութիւն կայ բացի այն թապլօներէն որոնք կենդանի վկաներ են մեր նկարչական կարողութեանը։

Մեր նկարիչներուն կեանքը մեզի անծանօթ մնացած է և աւելի լաւ գիտենք Նիքօլա Բուսէնի մը ծննդավայրը և ապրելու կերպը քան թէ ամենուս անծանօթ մնացած հայ տաղանդի մը՝ Վ. Չալկըճեանի ինքնութիւնը ու գործերը։ 1704ի առեւտները ապրող և հաւանաբար նուազածուի մը որդի եղող այս անձին գործէն դատելով՝ անուանի նկարիչ մը եղած ըլլալու է և լաւ գոյն տուող մը, քանի որ իր անունը մեզ հասցնող միակ գործը Ս. Գիրքէն առնուած դէպքի մը նկարն էր որ իր հնութեանը համար բարձր գինով, գնուեցաւ Ամերիկացիէ մը և ղրկուեցաւ Նիւ Եօրք։

Մենք՝ հին առեւտներէ ի վեր՝ արդէն գեղարուեստը սիրած՝ բայց զայն մշակողները չենք քաջալերած. աժանը կը փնտռենք և նկարչի մը տրուած 2—3 ռսկին ողորմութիւն կը նկատենք, իբր թէ մեր տուածովը լիովին վարձատրած կ'ըլլանք թնութեան եւ գեղարուեստի այդ սիրահարները։

Մեր բանասէրները կերեւայ թէ երկրորդական նիւթ մը կը նկատեն գեղարուեստի այս գլխաւոր ճիւղին մեր մէջ անցուցած շրջանի մասին բան մը գրելը ու մինչեւ հիմայ չեն ձեռնարկած ու եւ է ուսումնասիրութիւն կատարել։ Քանի որ գրուեցան Պատրիարքներու կենսագրութիւնը, Սմիթսոններու կենսագրութիւնը, հայ բժիշկներու պատմութիւնը եւայլն, հայ նկարչութիւնն ալ կրնար եւ արժանի է որ ունենայ իր տեղը եւ անանձին ուսումնասիրութեան մը նիւթ ըլլայ։

ՀԱՅԿ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

Կ. Պոլիս

ՍՏԱՅԱՆՔ Զ. Թորոսեան Էֆ. Ի հրատարակած ԴՊՐՈՅԻ ԳԻՐՔԻՆ Դ. հատորը, որ նոր լոյս տեսաւ, պատկերազարդ։ Կը բաղկանայ 208 էջէ։ Դին՝ 4 զրշ, Բօսթայի ծախքի համար 60 փարայի բուլ ղրկող վարժարաններու տնօրէնները կըստանան մէկ օրինակ ձրի։ Վաճառման կեդրոնատեղին է Կեդր. Գրատուն (Պոլիս, Չաքմաքճըլար) ուր կը գտնուի հեղինակը։ Նախորդ երեք մասերովը միասին օգտակար դասընթացք մըն է այս հրատարակութիւնը։

ՊԷՐՈՒԹ, 19 մայիս

Բնիկ Տիարպէքիբցի, Օհան Գուլումճեանը երբեմն փաստաբան՝ բայց ոչ վկայեալ, մօտաւորապէս 65 տարեկան, երկայնահասակ և թխագոյն, որդին՝ Յակոբ Գուլումճեան՝ 28 տարիներէ իրեր իրենց ծննդավայրէն մեկնած ըլլալով՝ անյայտ եղած են։—Ուստի կը խնդրուի մարդասիրաբար ամէն տեղի ազգայիններէ, որ հաճին անոնց ողջ կամ մեռած ըլլալուն՝ եթէ տեղեկութիւն մ'ունին իմացնել մեզ՝ ի միամտութէն յիշեալներու պարագայից որոնք աստ կը գտնուին։

Մնամ աղօթարար

ՆԵՐՍԷՍ ՎՐԴ ԽԱՊԱՅԵԱՆ

Տեսուչ—Հովիւ Պերուքի

ՏՈՒԹ. Ա. ՄԵԶՊՈՒՐԵԱՆ

ԲԱՐԻՅԻ ՀՍՄԱՆՍԱՐԱՆԷՆ

Կը դարմանէ տալոյց հիւնդուքիւններ (ներքին հիւանդութիւններ և վիրաբուժութիւն), կը կատարէ քթի, աղաջի և կոկորդի գործողութիւններ։

Երեքշաբթի, չորեքշաբթի, ուրբաթ և շաբաթ Բերա, Մեծ—փոքր Բրէտի Լիոնէի քով, թիւ 331։

Երկուշաբթի և հինգշաբթի Գատը գիւղ, Տուվար Տիպի, թիւ 12։

Արսոնսկր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն ԱՐԵՒՍԼԻՔ Օրագրի

ՄԵԾ ԼԻՔԻՏԱՍԻՐՈՆ

ՀԱՍՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐՈՒ

ՍՏԻՊՈՂԱԿԱՆ ՀԱՇՈՒԵՑԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ

Ապրիլ 19/6 երկուշաբթի օրէն սկսած է հաշուարդարութիւնը եւ վաճառումն ալ ժամ լուծեալ Էֆթիմօսուլօ եւ Ընկերութեան տան ապրանքներուն: Ընկերութեան վաճառատունը կը գտնուի Սթամպոյ, Սուլթան Համամ, Բագթիվան Խան: Ապրանքներէն մաս մը կը գտնուի նաեւ Ֆընտրգահի փողոցը գտնուող մթերանոցը: Վաճառքներն են մեծ առքեղէն, թուր, բիւլ, բրդեղէն, բամբակեղէն, որք կանխիկ գնուած են անգլիական եւ ֆրանսական գործարաններէ արդի գիններուն բարձրացումէն առաջ եւ ալիպիսի գիններով զորս անկախելի է այսօր ձեռք բերել եւ պիտի ծախուին ալ ժամ պարակի վրայ անմիջեւի պայմաններով: Հասարակութիւնն եւ վաճառականք կը հրատարակին տեսնել ալս վաճառքներն եւ լգտուիլ ներկայ անակնկալ առիթէն:

ՏՕ ՔԹ. Է. ՉՈՒՔԼԹՍ

Մասնագէտ փորի հիւանդութեանց (ստամոքսի, աղեաց) ինչպէս նաեւ օփոքրիտեան ախտերու:

Տօքթ. Է. Չուքլօս ու 17 տարի է ի վեր ի գործ կը դնէ իր արուեստը, վերջերս այցելած է Եւրոպայի գլխաւոր հիւանդանոցները ուր մօտէն հետեւած է իր մասնագիտութիւնը կազմող հիւանդութեանց դարմանումի նորագոյն մէթօններուն: Կը դարմանէ թէ՛ չափահասներու եւ թէ՛ աղօց ստամոքսի եւ աղեաց հիւանդութիւնները: Քիմիական տարրալուծում (որակական եւ քանակական) եւ մանրադէտական քննութիւն ստամոքսային հիւթերու: Կը բուժէ ելակարականութեամբ եւ մասած վաճառք դարմանէ ջերմամիզութիւն իրեն յատկաբարութեամբ եւ դեղերով: Հիւանդներ կ'ընդունի մօլէն օր ժամ 9էն 12 եւ 2էն 5 (Ը. Ե.), իր բնակարանին մէջ: Բերա, Տէրվիլ փողոց, Թէփէ—Պաշլի պարտէզին դէմ: Կիներուն համար սպասման առանձին սրահ: Ստամոքսի եւ աղեաց հիւանդութիւններէ առաւարդ աղքատները կ'ընդունի չորեքշաբթի օրերը ժամ 9էն մինչեւ կէս օր:

Ա.ԴԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ամէն Տեսակ բօնաֆիյէ ապրանքաց

Մեծ—Շուկայ, Քիւրքճիկերու դրան կից, Թ. 41—43

Նոյնպէս, արանց եւ կանաչ ճաշակաւոր հովանոցներու վաճառատուն, Պօլիս, Սուլթան—Համամ, Միտիլի Դրամատան դէմ թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ գտնուած ապրանքները, թէ՛ թօնաֆիյէի վերաբերեալ եւ թէ՛ արանց ու կանանց յատուկ հովանոցներ, իրենց գեղեցկութեան կը միացնեն տոկոսութիւն, եւ դիւրամատ չելի գիններու առաւելութիւնն ալ կ'ընծայեն հասարակութեան:

Ադամ Վարդեան մեծապէս գոհ թողուցած է իր բազմաթիւ յաճախորդները: Կ'արժէ որ Շուկայ ելլող մօլէն ընտանիք այցելէ անգամ մը ալս երկու վաճառատունները՝ եղանակին պէտքերը հոգալու համար:

ԱՐՄԵՆԱԿ ԻՆՃԷԵԱՆ

ՓԱՍՏԱՐԱՆ

Վկայեալ Բարիզի Իրաւագիտական վարժարանէն: Հաստատուած է Դաւթիա, Մէհմէտ Ալի փաշա խան, թիւ 35:

Կըստանձնէ պայտպանութիւնը մօլէն տեսակ դատերու՝ օսմանեան եւ օտար մօլէն կարգի դատարաններու առջեւ:

ԶԱՐԵՀ ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

ՎԻՐԱԲՈՅԺ—ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Վ. ԿԱՅԵԱԼ

ԼԻՐԵՒ ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԷՆ

ԵՒ

ՊԱՇԵՒԻՔ ԺՐԵՎԻ ԲՅԵԿԱՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԷՆ

Կը բուժէ աղաւթի մօլէն տեսակ ցաւեր եւ լինտերու հիւանդութիւններ, կատարելաւ գործեալ սիսթէմներով: Հիւանդ կ'ընդունի մօլէն օր, Բերա, Մեծ Փողոց Քրիսթի ԼիՕՆԷՒ դիմացը Կլավանի փողոց թիւ 2:

Երեքշաբթի եւ Ուրբաթ օրերը մինչեւ ցորեկ աղքատաց ազնայ քաշելը ձրի է:



ՌՕՍԻԱ - ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈՒՍԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուլազով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔի վրայ, եւ ՀՐԴԵՀի, ՓՈՒՍԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾ-ՆԵՐՈՒ ԴԷՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԳԵԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈԳԵՆԱԻՈՎ ՈՒՂԵՒՈ-ՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ ԴԷՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿԵՄ-րուելուն դէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած

10,666,667 Ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան

137,300,000 »

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամա-գլուխ եւ վնասուց հատուցում

282,000,000 »

1902 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տոկոս

54,000,000 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյլստա, Ղալաթիա:

ՅԱՄԱՔԱՅԻՆ ԵԻՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՎԻԲԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄՀՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԳՐԷ

ՈՒՆԻ ԿԵԱՆՔԻ, ՕԺԻՏԻ, ԱՐԿԱԾԻ, ԳՄԱՆ ԲՈՇԱԿԻ ՆԻՍԻՆԵՐ

VICTORIA
DE
BERLIN

ՎԻԲԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԿԵԱՆՔԻ ապահովագրութիւններ ունի թէ՛ բժշկական քննութեամբ եւ թէ՛ առանց բժշկական քննութեան Առանց բժշկական քննութեան եղած ԿԵԱՆՔԻ ապահովագրութիւններ ունեն ւճարումները շաբաթական մասնավճարներով տեղի կ'ունենան, սկսեալ 5 դրուէն

Ապահովագրեալ գումար 1902ին Ֆր. 1,244,457,577

Պահեստի դրամ 1902ին » 451,284,214

Հաստատուած 1853 սեպտ. 2ից առ-
հալի օն հրդարակալ եւ ուղղակի
կառավարութեան հսկողութեան ներ-
քէ:

ԸՆԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ

Օսմ. Կայս Պանքա

եւ Քրէտի Լիոնէ:

Լիպգոր Բնդհ. Ներկայացուցիչ
ՄԻՀՐԱՆ ՍԻՆԷՄ ԳԱԼՅԱՅԵԱՆ

Տեսուչ

ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՔԷԶԵՃԵԱՆ

Պոլիս Քաղաքնորդու խան

թիւ 454 45 Ե.

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՃԻԼՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (ի վիճակն)

ՊԱՏՈՒՍԱԿԱՆ ՆՍԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԻՔՍ ԱՌԻՏԵ ՊԱՎԻԷՌ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. ԸՆԿ. ընդդէմ հրդեհի եւ ծովային արկածներու (ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնք կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամատունն է ի Կ. Պոլիս, Քոնսթ. Լիօնէ
Ընդհ. եւ լիազօր. ներկայացուցիչ Թուրքիոյ

Ֆ. ՖԵՐԱՏԵԱՆ

Գրասենեակ, Պոլիս, Հանօթուլօ խան, Թ. 52—53—54—55—56

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԱՆՐԱՍ. ՄԵԾ. ՓՈԴԱՅԻ ԹԻՒ 200

Կալաթա-Սէրայի Լիս'ին դ մ

Գե. Նե. Շր. օրերը առաւօտեան կանու.

խեն մինչեւ իրիկուան ժ. 11 1/2

Բե. Գե Ուր. օրերը ճին մինչեւ 11 1/2

Իրակի օրերը ժամադրու բնամբ

ԱՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Գնեցէք Կ. ՆԱՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱ.
ԳՈՒԼԵԱՆԻ Զինատանէն, Հնդկատանէն,
Ճափայէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած
բարմ, հոսաւեօ եւ առողջարար թէյերէն,
որոնք ամբողջ եղանակին յարմարագոյն ըմ-
պելին են:

Միշտ ուշադրութիւն մեր
վաճառանքին:

Կ. Պոլիս, Պահէճ Գափու,
ձէլալ պէյ խան, Թիւ 10:

Մասնաճիւղեր Թուրքիոյ
Հիւսիսը քաղաքներուն մէջ,
նոյնպէս Սփիւրիոյ:



ՏՕՔԹ. ԱՆԹՈՆԻԱՏԻՍ

(Dr. Antóniadis)

Մասնագէտ ծածուկ եւ մորթային ախտերու
Բերա. Սերգիս փողոց, Թ. 20

(Անգլիական դեսպանատան մօտ)

Վկայեալ վիճակի Համալսարանէն ուր ու-
սած է տասնըմէկ տարի, միեւնոյն ատեն
իր օգնական-բժիշկ ծառայած ըլլալով
Բոֆ. Նաւմանի, Գարօսիի եւ Տիֆֆէլի
գաղտնի հիւանդութեանց յատուկ քլինիք-
ներու մէջ:

Մինակ ծածուկ հիւանդութիւններէ եւ
մորթային ախտերէ տառապողները կ'ընդունի
զորս կը բժշկէ նորագոյն եւ կատարելա-
գործեալ մէթօտներու համաձայն: Իր մաս-
նագիտութիւնն դուրս օրեւէ հիւանդ չըն-
դունիր:

ՏՕՔԹ. ԲՈՐԹՈՒԳԱԼԻՍ


(Dr. Portucalis)

Նախկին ուսուցիչ Կ. Պոլսոյ Կայո. Բժշ-
կական վարժարանին, աւելած Բարիզի բժշ-
կական համաժողովին: Մասնագէտ արանց
եւ կանանց ծննդական գործարաններու հի-
ւանդութեանց: Պատուոյ վկայագիր ունի
Պէրլինի, Լանտնի, Բելթայի եւ ուրիշ եր-
կիրներու Ակադեմիաներէն: Հնարիչ բժշկա-
կան գործիքներու եւ հեղինակ իր մասնա-
գիտութեան վերաբերեալ գործերու:

Հիւանդ կ'ընդունի Պոլսոյ կողմը, Կա-
մարջին դէմի անկիւնը, իր դարձանատան
մէջ, ամէն օր կէսօրէն մինչեւ իրիկուն, իսկ
Բերա, Թաքսիմ, Քրանսական հիւանդանոցին
դէմ, ամէն օր առաւօտէն մինչեւ կէս օր եւ
իրիկուն ժամ 6-էն 9 (Բ. Ն.)

ՊԱՆԵՆՑ ԳՐԱՏԱՆ

Մէջ կը վաճառուին հետեւեալ նոր հրատարակութիւնք. —
 1. — Արձագանդ խաղաղութեան, հեղինակ. իշխան Միրզա Ռիզա Սան Տանիշ (Պարսկ. ղեսպան ի Կ. Պօլիս) Ուսանաւոր քերթուած մը ի իշխանակ Լահէյի խաղաղութեան հաս-
 մաժողովին, տասնընինգ լեզուներու թարգմանուած փառաւոր գեղարդեստական հատար,
 մը հեղինակին կենդանադրով միասին: Գին. կէս Օսմ. ասկի կամ 12 ֆրանք. — 2. Հեր-
 պերթ Սրենսըրի «Կենցաղ կամ Դաստիարակութիւնը»: Տիեզերահնչակ իմաստասէրին այս
 բաղձօգուտ գործը թարգմանուած սահուն աշխարհաբարի, կ'արժէ որ ամէն գրադարանի
 մէջ իր մասնաւոր տեղն ունենայ: Գին 10 շրուշ. 3. Գերման բրոֆէսէօր Ա. Ալպրէխթի
 գործերէն սեռային առողջաբանութեան վրայ խօսող «Մարդը եւ իր ցեղը» առուն խօստ
 շահեկան գործին Բ. Տիպ. — գին 5 շրուշ: 4. Ժողովրդակա՞ն քարոզչէր. «Կեանքը առանց
 հաւատքի», գրեց Նիքսէս վրդ. Դանիէլեանց գին 5 շրուշ: 5. Շարականք Հայ. Ս. Եկե-
 ղեցւոյ, աշխարհաբարի վերածեց Ե. Տ. Անդրէասեան: — Գին Ա. հատորի 2 շրշ, Բ. հա-
 տոր 5 շրշ:



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի
 մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքե-
 նայ մը սեննայ, որովհետեւ լաւ մեքենայ
 մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մա-
 տուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը ան-
 վերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:
 Բոլոր աշխարհ զիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի
 միանգամայն մեքենաներ
 կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն ա-
 լելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւ-
 րագործածելին ըլլալուն բովանդակ աշխարհի մէջ՝
 ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճա-
 րատանց մէջ:

ՍԻՆԿԵՐԻ
 ՄԱՍԿԵՐԻ
 ՄԱՍԿԵՐԻ
 ՄԱՍԿԵՐԻ

ՐԵՐԱ

- 1. Մեծ փողոց, Պօն Մառշէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին.
- 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱԹԱ

- 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
- 2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

- 1. Սուլթան Համամ, Թ.
- 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԱԻԻՍԱՐ

Չարչը Պոյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի:

Կատարեալ երաշխաւորութիւն:

Մասնահիղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց,
 Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը: